



Փ Ա Ր Ո Մ *Paros*

ISSUE 98 SEPTEMBER / ԹԻՒ 98 ՍԵՊՏԵՄԲԵՐ

NEWSLETTER OF THE DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AUSTRALIA & NEW ZEALAND

Թեմական Լուրեր

Երեքշաբթի 2 Սեպտեմբերին, ընկերակցությամբ Արժանապատիւ Տէր Աշոտ Քահանայ Արքահամեանի, Առաջնորդ Սրբազան Հայրը Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդարանին մէջ ընդունեց Քորեպիսկոպոս Վարկիզ Թովմասը, Հոգեւոր Առաջնորդ Սիտնիի Հնդիկ Ուղղափառ Եկեղեցւոյ, որ այցելած էր բարի գալուստ մատըթելու Սրբազան Հօր եւ շնորհաւորելու անոր Առաջնորդի պաշտօնը Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայոց Թեմին:

Սրբազանն ու իր հիւրը քննարկեցին միջոցները



աւելի եւս զարգացնելու երկու եկեղեցիներու միջեւ արդէն իսկ գոյութիւն ունեցող մօտիկ յարաբերութիւնը: Վարկիզ Քոր-Եպիսկոպոս Նոյեմբեր 2025-ին պաշտօնապէս հրաւիրեց Սրբազան Հայրը Կլենֆիլտի մայր եկեղեցին, ներկայ գտնուելու Հնդիկ Ուղղափառ Եկեղեցւոյ Կաթողիկոսին պաշտօնական ընդունելութեան, Նորին Սրբութեան Հնդկաստանէն Աւստրալիա կատարելիք Հովուապետական այցելութեան ընթացքին:

Դժ., 3 Սեպտեմբեր - Սրբազան հայրը, ընկերակցությամբ Արժանապատիւ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի, Առաջնորդարանին մէջ ընդունեց ՀՄԸՄ Արարատ եւ Համազգային Նայիրի Մասնաճիւղի Վարչութեան անդամները, գլխաւորութեամբ ատենապետ Թադէ Քարամեանի: Այցելութիւնը նպատակ ունէր բարի գալուստ մատըթել Սրբազան հօր եւ շնորհաւորել անոր Առաջնորդական պաշտօնը:

Սրբազան հայրը դրուատեց Նայիրի պարախումբի վերջին ելոյթը, ինչպէս նաեւ Նայիրի երգչախումբին երգեցիկ ելոյթը Հայաստանի Օր փառատօնին:



Քննարկուեցան համայնքի մշակութային եւ կրթական կեանքին առնչուած հարցեր: Սրբազան Հայրը իր քաջալերանքն ու օրհնութիւնը փոխանցեց մշակոյթ, հայեցի դաստիարակութիւն եւ մարմնամարզ ջամբող ՀՄԸՄ Արարատ եւ Համագգային Նայիրի մասնաճիւղին:

Կիրակի, 7 Սեպտեմբեր - ՀԲԸՄ-ի ՆԱԽԱԳԱՀ ՊՐՆ ՍԱՄ ՍԻՄՈՆԵԱՆԻ ԱՅՅԸ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդ Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Արժանապատիւ Քահանայ Հայրերու, Թեմական եւ Ծխական Մարմիններու ներկայացուցիչներու, Եկեղեցական մարմիններու ներկայացուցիչներու, Առաջնորդարանի Բարեկամներու, Առաջնորդարանի Տիկնանց Յանձնախումբի անդամուհիներու, Առաջնորդարանին մէջ ընդունեց Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ) ի նախագահ Պարոն Սամ Սիմոնեանը եւ իրեն ընկերացող խումբը՝ Սիմոնիի ՀԲԸՄ-ի Վարչական կազմի ներկայացուցիչներ եւ բարեկամներ: Պարոն Սիմոնեան Աւստրալիա այցելեց ՀԲԸՄ



Ալեքսանտր Վարժարանի հիմնադրութեան 35-ամեայ յոբելենական հանդիսութեանց առիթով: Սրբազանը մի առ մի ծանօթացուց հիւրընկալները Պարոն Սիմոնեանին եւ իր շքախումբի անդամներուն:

Սրբազան հայրը պատուաբեր եւ պատմական նկատեց Պրն Սիմոնեանին եւ իր շքախումբին այցը Առաջնորդարան: Ան դրուատեց Ալեքսանտր Վարժարանի 35-ամեակին առիթով ՀԲԸՄի նախագահին այստեղ գտնուիլը, որը ցոյց կու տար իր վերաբերումը հանդէպ Հայ դպրոցի առաքելութեան: Անդրադառնալով Թումօ Սէնթըրի թեքնոլոճիի ոլորտին մէջ ուսումնական մեծ յառաջընթացին, Սրբազանը մաղթեց որ ՀԲԸՄի հազարաւոր հսկայ ծրագիրները յաջողութեամբ պսակուին եւ Պրն Սիմոնեանի դե-



կավարութեամբ, ՀԲԸՄի մարդակերտման առաքելութիւնը ըլլայ պըտղաբեր: Իր խօսքին մէջ Պրն Սիմոնեան նախ ծանօթացուց իր գործընկեր Պրն Էլի Աքիլեանը, անդրադարձաւ ՀԲԸՄ-ի ապաքաղաքական կազմակերպութեան հանգամանքին եւ անոր պատրաստակամութեան օգնելու Հայկական որեւէ կազմակերպութեան առանց գաղափարական խըտրականութեան: Ան վերահաստատեց գոյութիւն ունեցող ՀԲԸՄ – Հայաստանեայց Առաքելական Եկեղեցի սերտ կապերը, որոնք պիտի գոյատեւեն իր նախագահութեան օրերուն ալ:

Պրն Սիմոնեան եւ ընկերակիցները, Սրբազան հօր առաջնորդութեամբ

այցելեցին Սուրբ Յարութիւն Եկեղեցի, ուր բացատրութիւն ստացան եկեղեցւոյ մասին:



Կիրակի, 7 Մեպտեմբերին, Գերաշնորհ Տեր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Սրբազան Հօր հովանաւորութեամբ, ՀԲԸՄ Ալեքսանդր նախակրթարանի հիմնադրման 35-ամեակի հանդիսութիւնը տեղի ունեցաւ Զաթսուտ Բոնքորսի հանդիսարանին մէջ: Սրբազան հօր ընկերակցեցան Արժանապատիւ Տեր Աւետիս Քահանայ Համբարձումեան, Արժանապատիւ Տեր Աշոտ Քահանայ Արքահամեան, ներկայ էին նաեւ Արժանապատիւ Տեր Նորայր Աւագ Քահանայ Բաթանեան եւ Արժանապատիւ Տեր Պարթեւ Աւագ Քահանայ Գարագաշեան, ինչպէս նաեւ թեմական խորհուրդի ատենապետ Պարոն Սարգիս Տեր Պետրոսեան, Սուրբ Յարութիւն եկեղեցոյ ծրխական խորհուրդի ատենապետ Պարոն Արա Գոփուշեան եւ պատուոյ ատենապետ

Պարոն Պետրոս Զօրլու:

Հոգևորականներու շարքին էին նաեւ Կաթողիկէ Հայ եկեղեցոյ համայնքապետ Գերարդելի Բարսեղ Ծայրագոյն Վարդապետ Սուսանեան եւ Հայ Աւետարանական Եկեղեցոյ Հոգևոր Հովիւ՝ Վերապատուելի Յակոբ Սարգիսեան: Ներկայ էին նաեւ հայկական համարեա բոլոր կազմակերպութիւններու ներկայացուցիչները: Պատուարժան հիւրերու մէջ էին ՀԲԸՄ Կեդրոնական Վարչութեան նախագահ Պարոն Սամ Սիմոնեան եւ Տիկինը՝ Սիլվա, ՀԲԸՄ-ի հոգաբարձուներու խորհուրդի անդամ Պարոն Էլի Աքիլեան եւ տիկինը՝ Էլզաբիթա, ՀԲԸՄ-ի մասնաճիւղերու պատասխանատու եւ Կեդրոնական Վարչութեան գործավար Տիկին Նաթալի Գաբրիէլեան եւ Պարոն Վիգէն Տէմիրճեան: Հանդէսի թեման էր «Պատուելով Անցեալը, Ողջունելով ներկան, Ներշնչելով Ապագան»: Աշակերտները ճշգրիտ հերթակաւորութեամբ շարունելէ ետք, սկսան յայտագրի գործադրութեան Աւստրալիոյ եւ Հայաստանի քայլերգներով, որոնց յաջորդեցին ՀԲԸՄ-ի եւ Ալեքսանդր Վարժարանի քայլերգները:

Բարի գալուստի խօսքերը արտասանեցին, հայերէնով՝ շրջանաւարտ ուսանող



դուհի՝ տիկին Էլտա Զօրլու-Ամիրդան եւ անգլերէնով՝ Պարոն Սևակ Քեօշքերեան: Անոնք խորհրդածեցին դպրոցական իրենց տարիներուն ձեռք բերած արժէքներուն եւ փորձառութեանց մասին, որոնք զիրենք անսասան պահեցին իրենց չափահաս տարիքին :



Յայտագրի սկիզբին դպրոցական համագգեստները վերածուեցան գունաւոր հայկական տարազներու գեղեցիկ հաւաքածոյի մը, միաձուլուելով պաստառի վրայ հեռարձակուած ջրաներկ ֆոնին հետ, հանդիսատեսը տանելով Հայաստանի լեռնալանջեր, մինչ բեմին վրայ դասարան առ դասարան համախմբուած աշակերտները կը պարէին ժողովրդական/ազգագրական պարերը, սքանչացնելով հանդիսատեսները, որոնցմէ եկած ողջոյնները, ծափահարութիւններն ու սուլոցները աւելի եւս կը զարգացնէին ուրախ մթնոլորտը: Աշակերտները պարեցին «Քոչարի»ն, (Գ եւ Դ դասարաններ), «Հայաստան» (Ա եւ Բ դասարաններ), «Հայոց Սարեր» (նախապատրաստական եւ մանկապարտեզ), «Ազգագրական պար» (Ե եւ Զ դասարաններ): Աշակերտները կատարեցին նաև երկու երգ՝ «Under the Southern Skies» եւ «Մուշ», ինչպէս նաև գուարճալի երաժշտական ներկայացում հարուածային գործիքներով՝ տաղանդաւոր ուսուցչուհի Տիկին Զելա Մարկոսեանի ղեկավարութեամբ:

Յայտագրին իւրաքանչիւր բաժինին մէջ ներառուած էր նաեւ համերգի թեմային երեք մասերուն տեսողական ներկայացումները: «Պատուելով Անցեալը» բաժինին մէջ ընդգծուեցաւ դպրոցի բարերարներուն՝ Տէր և Տիկին Ալեք և Մարի Մանուկեաններու, Տոքթոր և Տիկին Ալեքս և Իգալէլ Ալեքսանտրներու, ինչպէս նաև 1980-ականներու ՀԲԸՄ-ի Վարչութեան տեսլականն ու առատաձեռն ներդրումները: «Ողջունելով Ներկան» բաժինին մէջ արտացոլաց դպրոցական կեանքը, հիմնադրութենէն մինչև մեր օրերը, շէշտը դրուեցաւ դպրոցի կարողութիւններուն, միջոցներուն եւ գործունէութեան աճին և զարգացման վրայ: «Ներշնչելով Ապագան» բաժինին մէջ ներկայացուեցան դպրոցի ծրագիրները, դպրոցական նոր գրադարանի և մասնագիտացուած ուսուցման համար լրացուցիչ երկու դասարաններու կառուցումը:

Յայտագիրը միայն ներկայիս աշակերտներուն չէր վերաբերէր, այլ նուիրուած էր բոլոր անոնց, որոնք անցած էին Ալեքսանտր վարժարանի դռներով: Յուզիչ և իմաստալից խորհրդաձօնութիւններ կատարեց առաջին շրջանաւարտ Տիկին Նորա Աբրահամեան-Մաթևոսեան, որուն յաջորդեցին շրջանաւարտներ Նաթաշա Ասլանեանը, Կարէն Փեգիկեանը, Լիւսի Ամիրզայեան-Սեդրաքեանը, Գրիգոր Տէմիրճեանը, Դանիէլ Պըչաքճեանը: Հայերէն կամ անգլերէն լեզուներով իւրաքանչիւր ներկայացում ջերմ յարգանքի տուրք էր «Ալեքսանտր Վարժարանի Ընտանիքին», որը կազմուած է նուիրուած ուսուցչական և գրասենեկային անձնակազմով, ծնողներով, շրջանաւարտներով և ՀԲԸՄ-ի համայնքով, որոնք միասին՝ կը ստեղծեն հոգատար և խնամող դպրոցական միջավայր: Այս մթնոլորտին մէջ աշակերտները ծաղկած են՝ դառնալով առողջ, կարող և յաջողակ երիտասարդ Հայ չափահասներ, գիտակից դպրոցի շարունակականութեան կարևորութեան:

Այս երիտասարդներուն կողմէ սփռուած լոյսը գեղեցիկ կերպով արտացոլաց ոգեշնչող և յուզիչ «Լոյսի Հանդիսաւոր Քայլերթ»ին մէջ, երբ շրջանաւարտները, վառած մոմերով, հերթով շարժեցան դէպի բեմին ստորոտը՝ որպէս Ալեքսանդր Վարժարանի պայծառ ապագայի խորհրդանիշ:



Ելոյթներ ունեցան դպրոցի տընօրէն Պարոն Մանուկ Տէմիրճեանը, դպրոցի հոգաբարձութեան և ՀԲԸՄ-ի երկարամեայ անդամ պարոն Վահէ Պօյաճեանը, հոգաբարձութեան ատենապետ Տիկին Սօսի Կիրակոսեանը, Տիկին Նաթալի Կարապետեանը և Պարոն Սեմ Սիմոնեանը:

Պարոն Տէմիրճեան ամբիոն բարձրացաւ որոտընդոստ ծափահարութիւններով: Իր ուղերձը փոխանցեց և բացատրեց, թէ ինչպէս դպրոցը տարիներու ընթացքին առաջընթաց արձանագրած է թեքնոլոճիի եւ ուսուցման մեթոտներու միջոցով, աշակերտները պատրաստելու

համար անընդհատ փոփոխուող ժամանակներուն, պահպանելով իրենց աւանդական և մշակութային արժէքները: Ան շնորհակալութիւն յայտնեց նուիրեալ ուսուցչական կազմին և ծնողներուն իրենց աջակցութեան համար, ինչպէս նաև ՀԲԸՄ-ին և դպրոցական համայնքի աւելի լայն շրջանակներուն: Ան ի մասնաւորի նշեց երկար տարիներ ծառայող և հիմնադիր ուսուցչուհի Տիկին Սեդա Քեօշքերեանի ոգեշնչող, ստեղծագործ և տարիներու անխոնջ ծառայութիւնը:

Պարոն Վահէ Պօյաճեան անդրադարձաւ դպրոցի պատմականին և տեսլականին: Ան յարգանքի տուրք մատուցեց հանգուցեալ բարերարներուն և ՀԲԸՄ-ի ատենապետ հանգուցեալ Պարոն Զաւէն Չեչենեանին, որ տարիներ շարունակ ղեկավարած է ՀԲԸՄ-ի Վարչութիւնը, դպրոցի ծրագիրը կեանքի կոչելու եւ զայն յաջողցնելու համար: Ան նաև շնորհակալութիւն յայտնեց դպրոցի համայնքին, որուն աջակցութիւնը եղած է դպրոցի ողնահարը՝ հակառակ մեծ մարտահրաւերներու առկայութեան:



Այնուհետև ան բեմ հրաւիրեց Պարոն Մանուկ Տէմիրճեանը, եւ Տիկին Սօսի Կիրակոսեանի հետ միասին շնորհակալական յուշատախտակ մը յանձնեց անոր, իր նուիրեալ ծառայութեան և դպրոցին մէջ ունեցած հսկայական ներդրման համար, սկիզբէն մինչև այսօր:

Տիկին Սօսի Կիրակոսեան կարճ բայց բովանդակալից խօսքերով ելոյթ ունեցաւ ապա, շնորհակալութիւն յայտնեց Աստուծոյ, որուն առաջնորդութեամբ է որ դպրոցը յաջող հաստատութիւն դարձած է: Ապա ան հրաւիրեց Պարոն Սիմոնեանը իր խօսքը արտասանելու: Պարոն Սիմոնեան բեմ բարձրացաւ ընկերակցութեամբ Տիկին Գաբրիէլեանի: Վերջինս սրտանց շնորհաւորական խօսքեր ըսաւ, եւ Պարոն Սիմոնեանի հետ յարգանքի տուրք մատուցեցին Պարոն Վահէ Պօյաճեանին, գնահատելով անոր «աւելի քան 60 տարիներու նուիրեալ և առանձնայատուկ ծառայութիւնը ՀԲԸՄ Սիտնիի և ՀԲԸՄ Ալեքսանտր Նախակրթարանին»:

Իր ուղերձին մէջ Պարոն Սիմոնեան արտայայտեց իր ուրախութիւնը համերգին կապակցութեամբ և գրնահատեց դպրոցին մէջ կատարուող հսկայական աշխատանքը: Ան շեշտեց դպրոցը մշտապէս փոփոխուող աշխարհին համընթաց պահելու կարևորութիւնը, ընդգծելով արհեստական բանականութեան նշանակալից կարեւորութիւնը: Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդ Սրբազան Հայրը, իր եզրափակիչ խօսքին մէջ յայտնեց, թէ որքան տպաւորւած էր շրջանաւարտներու ազգային ինքնութեան և մշակութային արժէքներուն նկատմամբ ունեցած ուժեղ ըզգացումներով, հակառակ այն իրողութեան որ անոնց հայեցի դաստիարակութիւնը տրուած է մինչեւ ճորդ դասարան: Ան ըսաւ, որ բոլոր խորհրդածութիւններէն զինք խորապէս յուզած էին Սևակ Քեօշերեանի զգացումները. « (Դպրոցը) սնուցեց իմ ինքնութիւնս և խորացուց իմ կապս մեր հայկական արմատներուն հետ այնպէս, որ ան յաւերժ մնայ ինձի հետ»: Սրբազան Հայրը նաև նշեց, որ իրեն համար ամենանշանաւոր Հայր, որ երբևէ եղած է, Մեսրոպ Մաշտոցն է, որուն տեսլականն այն էր, որ հայկական ինքնութիւնը կենդանի պահելու համար անհրաժեշտ է պահպանել իր լեզուն: Ան ըսաւ, որ այդ տեսլականը կը շարունակուի այսօր՝ այս երեխաներուն և երիտասարդներուն մէջ դրոշմուած հայկական ոգիով:



Սրբազան հայրը իր խօսքը եզրափակեց շնորհաւորելով ՀԲԸՄ-ի համայնքը և նշելով, որ ապագան լաւ ձեռքերու մէջ է: Այնուհետև ան դպրոցին նուիրեց գեղեցիկ ոսկեգոյն պատկեր մը, Աւստրալիոյ և Նոր Զելանտայի Հայոց Թեմին անունով՝ 35-ամեակի առիթով: Աշակերտներուն կողմէ արտասանուած Տէրունական աղօթքէն ետք Սրբազան Հայրը «Պահպանիչ» ով փակեց հանդիսութիւնը:

Սրբազան հայրը իր խօսքը եզրափակեց շնորհաւորելով ՀԲԸՄ-ի համայնքը և նշելով, որ ապագան լաւ ձեռքերու մէջ է: Այնուհետև ան դպրոցին նուիրեց գեղեցիկ ոսկեգոյն պատկեր մը, Աւստրալիոյ և Նոր Զելանտայի Հայոց Թեմին անունով՝ 35-ամեակի առիթով:

Աշակերտներուն կողմէ արտասանուած Տէրունական աղօթքէն ետք Սրբազան Հայրը «Պահպանիչ» ով փակեց հանդիսութիւնը:



ԲՁ., 8 Մեպտեմբերին, ընկերակցութեամբ Թեմական Խորհուրդի ատենադպիր Տիար Գեորգ Զափրագեանի, Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան այցելեց Համազգային Արշակ եւ Սօֆի Գօլստըն Ճեմարան, ուր դիմաւորուեցաւ Համազգայինի Շրջանային Վարչութեան ատենապետ Պրն Գեորգ Վարդանեանի, Ճեմարանի

խնամակալութեան անդամ Պրն Հարմիկ Յակոբեանի, Տնօրէն Պարոն Էտի Տէմիրճեանի եւ ուսուցչական կազմին կողմէ:

Նալպանտեան սրահի մուտքին, Սրբազան Հայրը կատարեց Աղ ու Հացի աւանդական օրհնութիւնը, ապա մուտք գործեց, ուր զինք կը սպասէին Ճեմարանի աշակերտները: Բարի գալստեան խօսքերէն ետք, մասնակցութեամբ Ճեմարանի բոլոր դասարաններու աշակերտներուն, ներկայացուեցաւ գեղարուեստական գեղեցիկ յայտագիր, որ մեծապէս գնահատուեցաւ Սրբազան Հօր կողմէ:



Յայտագրի աւարտին, Սրբազանը արտասանեց իր սրտի խօսքը եւ արտայայտեց իր գոհունակութիւնը: Ան մեծապէս գնահատեց Ճեմարանի տընօրէնութեան, ուսուցչական կազմին եւ պաշտօնէութեան տարած հայապահպանման ի նըպաստ հսկայ աշխատանքը, ան ընդգծեց, որ հոգեւոր դաստիարակութիւնը անջատ մասնիկն է Հայեցի դաստիարակութեան, որուն համար Առաջնորդարանն ու Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին ճիգ չեն խնայած եւ գործնապէս պիտի շարունակեն զօրակցիլ Ճեմարանի զարգացնելու համար աշխատանքը: Հանդիսութեան փակումէն ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն դպրոցի Չափրագեան գրադարանին մէջ, ուր Սրբազան Հայրը մօտէն ծանօթացաւ ուսուցիչներուն եւ գրադարանի գործունէութեան:



Բ2., 8 Մեպտեմբերի երեկոյեան, Սրբազան Հայրը Առաջնորդարանին մէջ ընդունեց Համագգայինի Գրական Գեղարուեստական Յանձնախումբի անդամուհիները զըլխաւորութեամբ ատենապետուհի Տիկին Լիլիկ Կոտոյեանի: Սրբազան հայրը մօտէն տեղեկացաւ Յանձնախումբի գործունէութեան եւ իր գործնական զօրակցութիւնը յայտնեց յանձնախումբի գալիք ծրագիրներուն:



Բ2., 9 Մեպտեմբերի կէսօրէ ետք, Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդ Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի եւ Թեմական Խորհուրդի անդամ Տիար Իվան Օհաննէսեանի այցելեց Բայտի քաղաքապետ Պրն. Թրէնթըն Պրատունի: Համդիպման ներկայ եղաւ նաեւ Բայտի նախկին քաղաքապետ Տիար Սարգիս Ետէլեան: Հանդիպման ընթացքին, Սրբազան Հայրն ու Քաղաքապետ Պրատուն անդրադարձան քաղաքապետարան-Առաջնորդարան սիրալիւր յարաբերութեանց եւ զարգացող փոխ-գործակցութեան:

Բ2., 9 Մեպտեմբերին, Սուրբ Յարութին Եկեղեցույ երիտասարդաց վարչութիւնը ուղեկցութեամբ Արժանապատիւ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի եւ Արժանապատիւ Տէր Աշոտ Քահանայ Աբրահամեանի այցելեց Առաջնորդ Սրբազան Հօր:



Հինգշաբթի, 11 Մեպտեմբերին, Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդ Սրբազան Հայրը, Առաջնորդարանին մէջ, ընդունեց Աւստրալիոյ Հայ Դատի Յանձնախումբի անդամներ գլխաւորութեամբ գործադիր տնօրէն Պրն Մայքըլ Գոլոգոսեանի: Սրբազան հօր կ'ընկերակցէր Արժանապատիւ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեան:

Սրբազան հայրը մօտէն տեղեկացաւ Յանձնախումբի աշխատանքներուն, գնահատեց զանոնք եւ իր զօրակցութիւնը յայտնեց Հայ Դատի Յանձնախումբի տարած նպատակաւորղուած գործունէութեան:

Ուրբ., 12 Մեպտեմբեր - Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդ Սրբազան Հայրը ընդունեց Աւստրալասիական Մերձաւոր Արեւելեան եկեղեցիներու (ԱՄԷՔ) կազմակերպութեան նախագահ Գերաշնորհ Բոպըրթ Բապպաթ Մէլքայթ Կաթօլիկ Եպիսկոպոսը, որուն կ'ընկերակցէր Անտիոքեան Ուղղափառ Եկեղեցոյ Մետրոպոլիտ Գերաշնորհ Պասիլիոս Արքեպիսքոպոս Քուտսիէն: Վարդան Սրբազան հօր ընկերակցեցաւ Արժանապատիւ Տէր Աշոտ Քահանայ Աբրահամեան: Հիւրերը բարի գալուստ եւ բարի կեցութիւն մաղթեցին Սրբազան Հօր եւ յաջողութիւն՝ իր ապագայ համայնքային եւ միջ-եկեղեցական գործունէութեանց:





Ուրբ., 12 Սեպտեմբերին, Գերաշնորհ Տեր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդ Սրբազան Հայրը Առաջնորդարանին մէջ ընդունեց Համագգային Թումանեան Վարժարանի հոգաբարձութիւնը, ուսուցչական կազմը, գլխաւորութեամբ տնօրէն Պրն. Գեւիկ Աւետեանի:

Սրբազան հայրը մօտէն տեղեկացաւ Թումանեան Վարժարանի տարած ուսումնական գործունէութեան, որուն կամաւոր աշխատողներու շնորհիւ ցարդ բազմա-հարիւր շրջանաւարտներ ստացած են հայեցի դաստիարակութիւն:

Սրբազան հայրը անձամբ իր եւ Առաջնորդարանի ամբողջական զօրակցութիւնը յայտնեց վարժարանին:

Երկուշաբթի, 15 Սեպտեմբերին Գերաշնորհ Տեր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդ Սրբազան Հայրը Առաջնորդարանին մէջ ընդունեց Ալեքսանտր Հայ Հանգստեան Տան Խնամակալութեան ներկայացուցիչները գլխաւորութեամբ ատենապետուհի Տիկին Նորա Պոտքինի:

Սրբազան Հօր կ'ընկերակցէր Արժանապատիւ Տեր Աշոտ Քահանայ Աբրահամեան:

Առաջնորդը մօտէն տեղեկացաւ Հայ Հանգստեան Տան տարած գործունէութեան, որուն շնորհիւ բազմա-հարիւր մեծահասակներ այնտեղ յատուկ խնամք կը ստանան:

Սրբազան հայրը Առաջնորդարանի ամբողջական զօրակցութիւնը յայտնեց Հանգստեան Տան:




Երկուշաբթի, 15 Սեպտեմբերի երեկոյ, Գերաշնորհ Տեր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդ Սրբազան Հայրը Առաջնորդարանին մէջ ընդունեց Նոր Մերունդ Մշակութային Միութեան Տիկնանց Յանձնախումբը:

Սրբազան Հօր կ'ընկերակցէր Արժանապատիւ Տեր Աշոտ Քահանայ Աբրահամեան:

Սրբազան հայրը մօտէն տեղեկացաւ Նոր Մերունդի գործունէութեան եւ իր ու Առաջնորդարանի ամբողջական զօրակցութիւնը յայտնեց Հայ մշակոյթին անսակարկ ծառայած եւ ծառայող «Նոր Մերունդ»ին:



Գ2., 16 Սեպտեմբեր – Ընկերակցությամբ Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի, Սրբազան Հայրը հովուական այցելութեան համար մեկնեցաւ Նոր Զելանտայի Օքլանտ քաղաքը: Մանրամասնութիւնները կարդալ «Ծխական Լուրեր»ուն մէջ:



սովորական դասախօսութիւն չէր հրամ-
ցուածը այլ՝ Առջանց Շրջապտոյտ Միխիթար-
եան Մայրավանք Սուրբ Ղազար Կղզի:
Զեկուցաբերն էր Միխիթարեան Վարդապետ
Հայր Գեորգ Սարգսեան: Հայր Սուրբը ամբողջ
երկու ժամ մանրամասն բացատրութիւն
տուաւ փոքր Հայաստան Մայրավանքին եւ
կղզիին մասին, եւ պատասխանեց ակնդիրնե-
րու բոլոր հարցումներուն: Հանդիսավար
Նշան Սարկաւազ Պատմաճեան ծանօթացուց
Հայր Սուրբը մասնակիցներուն իսկ Վարդան
Սրբազան Նաւասարդեան կատարեց բացման աղօթքը եւ արտասանեց եզրափակիչ իր սրտի խօսքը:
Փակման աղօթքը կատարեց Հայր Սուրբը: Շրջապտոյտը ակնդրելու համար սեղմել վարի յղումին վրայ:

<https://www.youtube.com/watch?v=CBk3LrtmQy4>

Դ2., 24 Սեպտեմբեր – Նախագահութեամբ Գերաշնորհ Առաջնորդ Սրբազան Հօր, Առաջնորդարանի կազմակերպած Առջանց Լսարանական Երեկոներու 44-րդը տեղի ունեցաւ մասնակցությամբ բազմատասնեակ ակնդիրներու, մեծամասնութեամբ Աւստրալիայէն: Մասնակիցներ եղան նաեւ Լիբանանէն, Յունաստանէն, Հայաստանէն, Երուսաղէմէն եւ Իտալիայէն: Այս անգամ



Ուրբաթ 26 Սեպտեմբերի երեկոյեան, Սրբազան Հայրը ներկայ եղաւ Համազգային Արշակ եւ Սօֆի Գօլստըն ճեմարանի Աւարտական 12րդ դասարանի աշակերտութեան ամավերջի հանդէսին, որ տեղի



կազմեն մեր համայնքին ազգային-հոգեւոր ղեկավարութեան:

ունեցաւ դպրոցի Նալպանտեան սրահին մէջ: Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս յատուկ, բծախնդիր յայտագրով հանդէս եկան շրջանաւարտ դասարանի ուսանողները մեծապէս տպաւորելով Սրբազան Հայրը:

Սրբազան Հայրը արտասանեց փակման խօսքը, որով շնորհաւորեց 2025-ի շրջանաւարտ սերունդը, գնահատեց անոնց կապուածութիւնը իրենց դպրոցին եւ ինքնավստահ՝ իր յոյսը յայտնեց որ անոնք մաս պիտի



Երկուշաբթի, 29 Սեպտեմբերին, Առաջնորդ Սրբազան Հայրը Առաջնորդարանին մեջ ընդունեց Դոկտ Բոտ Պենսըն Քահանան, որ յանուն Նիւ Սաութ Ուելզի Էքիմենիք Խորհուրդին եկած էր բարի գալուստ մաղթելու Սրբազան Հոր եւ շնորհաւորելու իր Առաջնորդի պաշտօնը: Սրբազան Հոր կ'ընկերակցէր Արժանապատիւ Տէր Աշոտ Քահանայ Աբրահամեան: Սրբազան Հայրն ու իր հիւրը քննարկեցին Էքիմենիք Խորհուրդ – Առաջնորդարան արդէն իսկ հաստատուած սիրալիր յարաբերութիւնները եւ որոշեցին զանոնք աւելի եւս սերտացնել:



Երկուշաբթի, 29 Սեպտեմբերի երեկոյեան, Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդ Սրբազան Հայրը Առաջնորդարանին մեջ ընդունեց ՀՄԸՄ-ի Նաւասարդ Մասնաճիւղի վարչութիւնը գլխաւորութեամբ ատենապետ Պրն. Կարպիս Գոլոգոսեանի: Սրբազան հօր կ'ընկերակցէին Արժ. Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեան եւ Ս. Յարութիւն Եկեղեցւոյ երիտասարդական միութենէն անդամներ: Նաւասարդ մասնաճիւղի վարչութիւնը եկած էր բարի գալուստ մաղթելու Սրբազան հօր: Սրբազան Հայրը շնորհակալութիւն յայտնեց հիւրերուն եւ իր անսակարկ զօրակցութիւնը յայտնեց ՀՄԸՄ-ի մեծ ընտանիքին:



Երեքշաբթի, 30 Սեպտեմբեր - Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդ Սրբազան Հայրը Առաջնորդարանին մեջ ընդունեց Համազգային Թարգմանչաց Վարժարանի Հոգաբարձութեան կազմը գլխաւորութեամբ ատենապետ Պրն. Ռաֆֆի Զափրագեանի եւ վարժարանի տնօրէնուհի՝ Տիկին Շուշան Սարեան-Սահակեանի: Սրբազան հօր կ'ընկերակցէր Արժ. Տէր Աշոտ Քահանայ Աբրահամեանը: Հիւրերը եկած էին բարի գալուստ մաղթելու Սրբազան Հոր եւ շնորհաւորելու իր Առաջնորդի պաշտօնը: Սրբազան Հայրը շնորհակալութիւն յայտնեց հիւրերուն: Ան տեղեկացաւ վարժարանի գործունէութեան

եւ իր զօրակցութիւնը յայտնեց վաթսունամեայ Թարգմանչաց Վարժարանին:

Լուրեր Ծուխերէն

ՉԱՅՈՒՌԻՏ – ՄԻՏՆԻ Սուրբ Յարութիւն Եկեղեցի

ԱՄԵՆԱՄՍԵԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

Սեպտեմբեր 6-ին, Շաբաթ երեկոյեան,

երիտասարդներու համար Սուրբ Պատարագ մատուցեց Արժանապատիւ Տէր Աւետիս քահանայ Համբարձումեան, իսկ քարոզեց Գերաշնորհ Տ. Վարդան Եպս. Նաւասարդեան:

Երիտասարդական Սուրբ Պատարագները կը մատուցուին ամէն ամսուան առաջին Շաբաթ օրը, երեկոյեան ժամը 6:00-ին:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԱՅ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՏՈՒՆ

Սեպտեմբեր 10-ին՝ Չորեքշաբթի, Արժ. Տ. Աւետիս քին. Համբարձումեան եւ Արժանապատիւ Տ. Աշոտ քին. Աբրահամեան իրենց հերթական ամենամսեայ այցելութիւնը կատարեցին Ալեքսանդր Հայ Հանգստեան Տուն: Սրահին մէջ հայ տարեց հայրերու եւ մայրերու համար կատարուեցաւ ժամերգութիւն, բժշկութեան աղօթք եւ Սուրբ Հաղորդութիւն մատուցուեցաւ:



ԽԱՉՎԵՐԱՅԻ ՏՕՆԸ Ս.

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՎԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Սեպտեմբեր 14-ին՝ Կիրակի, Խաչվերացի տօնի առթիւ, Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ մէջ եպիսկոպոսական հանդիսատը՝ Սուրբ Պատարագ մատուցեց Թեմիս բարեխնամ Առաջնորդը՝ Գերաշնորհ Տ. Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան, ընթերակայութեամբ Արժանապատիւ Տ. Աւետիս եւ Տ. Աշոտ քահանաներու, մասնակցութեամբ եւ երգեցողութեամբ սարկաւազաց ու դպրաց դասերուն:

Յաւարտ Սուրբ Պատարագի, կատարուեցաւ Անդաստան եւ ռեհանի օրհնութիւն: Սուրբ Խաչով եւ Աւետարանով օրհնուեցան երկրին չորս կողմերը: Ապա Սրբազան Հօր, քահանայից, սարկաւազաց եւ դպրաց դասին մասնակցութեամբ թափօրը եկեղեցւոյ շրջափակին մէջ հաւաքուեցաւ աւանդական մատաղօրնէքը խորհրդանշող հարիսայի շուրջ: Մատաղը օրհնուեցաւ եւ բաժնուեցաւ ներկայ հաւատացեալ ժողովուրդին:

ՆՈՒՒՐԱԲԵՐՈՒԵՑԱԻ ՆՈՐ ՔԱՆԴԱԿԱԶԱՐԴ ԽՈՐԱՆԻ ԳՐԱԿԱԼ ԵՒ ՆՈՐ ԱՐԾԱԹԵԱՅ ԶԵՌԱՅ ԽԱՉ

Սեպտեմբեր 14-ին, Սրբազան հօր ձեռամբ Սուրբ Յարութիւն եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ նոր գրակալի օրհնութիւնը: Զարդաքանդակներով շքեղ գրակալը պատրաստուած է Հայաստանի մէջ, որ նուիրուեցաւ Սուրբ Յարութիւն եկեղեցւոյ Տիկին Ազատուհի Սահակեան Քեոսէանի եւ իր զաւակներուն՝ Ալին, Մանօ եւ Հրաչ Քեոսէաններու կողմէ, ի յիշատակ իրենց ծնողաց եւ մեծ ծնողաց Կարապետ եւ Արշալոյս Սահակեաններու, ինչպէս նաեւ Մանուէլ եւ Ալիս Քեոսէաններու:

Իսկ Սեպտեմբեր 28-ին, Վարագայ Սուրբ Խաչի տօնին, Գերաշնորհ Տ. Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեանի ձեռամբ Սուրբ Յարութիւն եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ նոր արծաթեայ ձեռաց խաչի օծումը:



Խաչը պատրաստուած է Հայաստանի մէջ, որուն նուիրատուներն են Տիկին Ծովիկ Քէշիշեան եւ զաւակունք, ի յիշատակ ծնողաց՝ Մատթէոս եւ Երանուհի Պալեաններու։
Սրբազան Հայրը գովեց նուիրատուներու եկեղեցասէր ու եկեղեցանուէր նախանձախնդրութիւնը՝ եկեղեցւոյ կարիքները հոգալու իրենց պատրաստակամութեան, ինչպէս նաեւ իրենց սիրեցեալ ծնողաց յիշատակը յաւերժ պահելուն համար։



ԿԱՏԱՐՈՒԵՑԱԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՅԱՐԴ ՏԱՐԵՐԱՐՁԻՆ ԱՌԹԻ

Մեպտեմբեր 21-ին, յընթացք Սուրբ Պատարագի, կատարուեցաւ Հանրապետական Մաղթանք՝ նախագահութեամբ Տ. Նորայր Աւագ Քինյ. Փաթանեանի, աղօթք վերառաքելով հայրենիքի խաղաղութեան եւ ապահովութեան համար։ Օրուայ խորհուրդին մասին, յաւուր պատշաճի քարոզեց Արժանապատիւ Տ. Պարթեւ Աւագ Քին. Գարագաշեան։

Ուէնթուրըթվիլ – ՄԻՏՆԻ Սուրբ Երրորդութիւն Եկեղեցի



Շաբաթ 6 Մեպտեմբերին համայնքը մասնակցեցաւ դաշտագնացութեան Հայրերու Օրուան առիթով։ Ծխական Խորհուրդը իր շնորհակալութիւնը կը յայտնէ Տէր Աշոտին մեզի միանալու և իր աղօթքներն ու օրհնութիւնը մատուցելուն համար։ Շնորհակալութիւն նաեւ բոլոր անոնց, որոնք նուիրեցին համեղ ուտեստներ, որոնք բաժնեկից եղան բոլոր ներկաները։ Ուրախալի էր տեսնել ընտանիքներ և ընկերներ, որոնք միասին կը տօնուէին և կը մեծարէին մեր հայրերը։ Յուսով ենք որ մեր համայնքին հետ այլ իմաստալից առիթներով դարձեալ կը հաւաքուինք։ Օրհնեալ ըլլայ մեր հայրերուն տօնը։

ԽԱՉՎԵՐԱՑԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Կիրակի 14 Մեպտեմբերին Արժանապատիւ Տէր Պարթեւ Աւագ Քահանայ Գարագաշեան մատուցեց Սուրբ եւ Անմահ Պատարագ եւ քարոզեց։ Յընթացք Պատարագին տեղի ունեցաւ Անդաստան եւ Ռեհանի օրհնութիւն։

ՕՔԼԱՆԸ - ՆՈՐ ԶԵԼԱՆԸԱ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ



Գերաշնորհ Տեր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան իր հովուական անդրանիկ այցելութիւնը կատարեց Նոր Զելանտայի Հայ համայնքին:

Երեքշաբթի 16 Սեպտեմբերի երեկոյեան, ընկերակցութեամբ Արժանապատիւ Տեր Աւետիս Քահանայ Համբարձումեանի, Սրբազանը ժամանեց Օքլանտ քաղաք, ուր դիմաւորուեցաւ Հայաստանի Պատուոյ Հիւպատոս Պրն Յակոբ Երլտըզեանի, Օքլանտի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցւոյ (ՍԳԼ) Ծխական Խորհուրդի (ԾԽ) ատենապետ Տոքթ Զաւէն Փանոսեանի, Առաջնորդարանի Դիւանապետ եւ ՍԳԼԾԽ-ի ատենադպիր Պրն Նշան Պասմաճեանի կողմէ: Յաջորդ երկու օրերուն, Սրբազան Հօր շքախումբին թիւը աւելցաւ Սիտնիէն ժամանած 7 անդամներով, յանձինս՝ Թեմական Խորհուրդի անդամ Պրն Իվան Օհաննէսեանի, Ս. Յարութիւն Եկեղեցւոյ (ՍՅ) ԾԽի ատենապետ Տիար Արա Գոփուշեանի եւ Տիկնոջ Քարոլինի, ՍՅԾԽ-ի

փոխատենապետ Տիար Վազգէն Ամիրզայեանի եւ Տիկնոջ Մարիայի, Երեցկին Յասմիկ Համբարձումեանի եւ Լոյս ամսաթերթի գլխաւոր խմբագիր Բարեշնորհ Պօղոս Սարկաւազ Քէլէշեանի:



Չորեքշաբթի, 17 Սեպտեմբերի կէսօրին, Սրբազան Հայրը ներկայ եղաւ ճաշկերոյթի մը որ տրուած էր Հայաստանի Պատուոյ Հիւպատոս Պրն Յակոբ Երլտըզեանի կողմէ ի պատիւ Սրբազան հօր, անոր անդրանիկ այցին եւ Հայաստանի Անկախութեան 34րդ տարեդարձին առիթներով: Պարոն Երլտըզեան հրաւիրած էր ութ հիւպատոսներ: Ներկայ էր նաեւ Նոր Զելանտայի Մարդկային Իրաւանց Պաշտպանը՝ Տիար Սթիվըն Բէյնսօն: Բարի գալստեան խօսքով հանդէս եկաւ Պարոն Երլտըզեան եւ իր շնորհակալութիւնը յայտնեց ներկաներուն, որոնք իրենց յարգանքը ցուցաբերեցին Հայոց Եկեղեցւոյ Առաջնորդին եւ իրենց ներկայութեամբ իրենց զօրակցութիւնը յայտնեցին մեր հայրենիքին:

Երեկոյեան, Սրբազան Հայրը, Տեր Աւետիս, ընկերակցութեամբ ՍԳԼ եկեղեցւոյ ԾԽի անդամներուն եւ համայնքի անդամներուն ներկայ եղան Օքլանտ Համալսարանի Maclaurin Chapel-ի մէջ Արարչագործութեան նուիրուած էքիւմէնիք աղօթքին (Prayer Season of Creation 2025): Ձեռնարկը կը հովանաւորուէր Օքլանտի Կաթոլիկ Թեմի Առաջնորդ Սթիվ Լօուի Եպիսկոպոսին կողմէ, կազմակերպութեամբ Անկլիքան եւ

Կաթոլիկ եկեղեցիներու հոգեւորական ներկայացուցիչներու եւ Հայ Եկեղեցւոյ ներկայացուցիչին կողմէ: Սրբազան Հայրը, Տեր Աւետիս, Նշան Սարկաւազ, Օրիորդ Գայանէ Սարգսեան եւ Պրն Դաւիթ Սարգսեան իրենց մասնակցութիւնը բերին արարողութեան մէջ ընթերցելով Սուրբգրային հատուածներ: Իրենց մասնակցութիւնը բերին նաեւ Մեթոտական եւ Երիցական եկեղեցիներու հոգեւորականներ:

Տեղի ունեցաւ թերեւ հիւրասիրութիւն, որուն ընթացքին Սրբազան հայրը ծանօթացաւ Օքլանտի Հայ համայնքէն տասնեակ մը անդամներու:



Հինգշաբթի 18 Սեպտեմբերի կէսօրին Սրբազան Հայրը, Տէր Աւետիս եւ Նշան սարկաւազ ճաշի հիւրերն էին ՆՋի մարդկային իրաւանց պաշտպան Սթիվըն Բէյնպոյին, որմէ ետք Պրն Բէյնպօ Սրբազան հօր ցոյց տուաւ Օքլանտի կարգ մը տեսարժան վայրեր: Նախքան ճաշ, կազմակերպութեամբ ՄԳԼի Ծխին, Սրբազան Հայրը այցելեց Օքլանտի թանգարանը եւ ծանօթացաւ բնիկ (Մաօրի) ժողովուրդին բարքերուն եւ պատմութեան:



դապետին զայն պատուելով յուշանուէրով մը:

Նոյն երեկոյ, ընդառաջելով Անկլիքան Վարդապետ Իվիցա Կրէկուրեցի հրաւերին, Սրբազան հայրը իր շքախումբով ներկայ եղաւ անոր գահակալութեան արարողութեան Օքլանտի Հօուիք արուարձանի Ամենայն Սրբոց Անկլիքան եկեղեցոյ մէջ (Vicar All saints Anglican Church, Howick): Արարողութիւնը վարեց Օքլանտի Անկլիքան Թեմի Առաջնորդ Բոս Պէյ Եպիսկոպոսը: Սրբազան Հայրը եւ իր շքախումբի անդամները մեծ յարգանքի արժանացան ըլլայ եպիսկոպոսին ըլլայ Իվիցա Վարդապետին կողմէ: Այս վերջինը միշտ նեցուկ կանգնած է Հայ եկեղեցոյ եւ Հայ համայնքին: ՄԳԼի Ծխը իր երախտագիտութիւնը յայտնեց վար-

Ուրբաթ 19 Սեպտեմբերի առաւօտ, Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Տէր Աւետիսի, Նշան Սարկաւազի, Իվան Օհաննէսեանի եւ Արա Գօփուշեանի, կատարեց երկու կարեւոր այցելութիւններ, մին՝ Օքլանտի Կաթոլիկ Թեմի Առաջնորդ Սթիվըն Լօուի եպիսկոպոսին եւ միւսը՝ Անկլիքան Եկեղեցոյ



Թեմի Առաջնորդ Ռոս Պեյ Եպիսկոպոսին: Երկու եպիսկոպոսները մեծ յարգանք ցուցաբերեցին Քրիստոնեայ առաջին ազգի ներկայցուցիչ եպիսկոպոսին եւ յայտնեցին իրենց պատրաստակամութիւնը զօրակցելու Օքլանտի Հայ համայնքին: Յատկանշական էր Անկլիքան եպիսկոպոսին մէկ առաջարկը երբ ան ծունկի եկաւ Սրբազան Հօր առջեւ եւ խնդրեց անոր օրհնութիւնը: Սրբազան Հայրը մեծ հաճոյքով կատարեց Ռոս Եպիսկոպոսին խնդրանքը:

Ուրբաթ երեկոյեան, կազմակերպութեամբ Նոր Զելանտայի Հայկական Միութեան վարչութեան, Սուրբ Թով-

մաս Մուր Կաթոլիկ եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն Սրբազան հօր ի պատիւ, ի ներկայութեան յիսունի շուրջ հայորդւոց: Տեղի ունեցաւ աղ ու հացի օրհնութիւն, որմէ ետք փոքրիկներ Մարիա Իսքէնտերեան եւ Սոֆի Մքոյեան իրենց արտասանութիւններով բարի գալուստ մաղթեցին Սրբազան հօր:

Ծրագրուած էր դասախօսութիւն-գրոյց Սրբազան հօր կողմէ, որ տեղի ունեցաւ: Սրբազանը ներկայացուց «Հայ եկեղեցւոյ եւ եկեղեցականին դերերը մեր կեանքին մէջ» նիւթը:

Սրբազանը անդրադարձաւ անցեալի մեր մատենագիրներուն, Թարգմանիչներուն, պատմաբաններուն, որոնք բոլորը հոգեւորականներ էին: Անդրադարձաւ Սփիւքի մէջ հայապահպանման ի խնդիր եկեղեցւոյ եւ եկեղեցական հայրերու տարած պայքարին եւ մարտահրաւերներու յաղթահարման:

«Մեր լինելութեան ակունքը թագնուած է Եկեղեցւոյ մէջ, մեր մշակոյթը զարգացած է վանքերու



մէջ» ըսաւ Սրբազանը եւ քաջալերեց ներկաները որ պայքարի իրենց ժառանգած գէնքերը բնաւ վար չդնեն: «Հայուն անունը ՊԱՅՔԱՐ է», ըսաւ Սրբազանը: Ան իր պատրաստակամութիւնը յայտնեց այս փոքր համայնքին գործնապէս զօրավիգ կանգնելու:

Սրբազանը իր եզրափակիչ խօսքին մէջ թելադրեց թօթափել անձնասիրութիւնը եւ թուեց այն երեք արժէքները, որոնց պէտք է ծառայել՝ **Հայ եկեղեցին, Հայ մշակոյթը, Հայ պետականութիւնը:**

Սրբազան հայրը գոհացուց ներկաները տալով բացատրական պատասխաններ անոնց ուղղած հարցումներուն:



Երեկոն աւարտեցաւ ճաշկերոյթով, որը կազմակերպուած էր ՆԶԻ Հայկական Միութեան Տիկնանց Յանձնախումբի ջանքերով եւ անոնց պատրաստած համադամ ճաշերով:

Շաբաթ, 20 Սեպտեմբերի առաւօտեան, Սրբազան Հօր նախագահութեամբ եւ մասնակցութեամբ Տէր Աւետիսի եւ ՍԳԼ եկեղեցւոյ Ծմի հինգ անդամներուն, գումարուեցաւ մտերմիկ հանդիպում-ժողով: Սրբազան հայրը լսեց Ծմ-ի հարցերը եւ տուաւ իր ուղղութիւնները, միշտ հաւաստիացնելով իր գործնական զօրակցութիւնը Ծմ-ին եւ Հայ համայնքին: Կէսօրուան 12-ին Սրբազան Հայրը իր շքախումբով այցելեց այն գերեզմանատունը, ուր մեծամասնութիւնը Հայ հանգուցեալներուն թաղուած են: Տեղի ունեցաւ նորոգ հանգուցեալ Մարկոս Աւագ Սարկաւագ Իսթնտէրեանի շիրմաքարին օրհնութիւն, ինչպէս նաեւ՝ ընդհանուր հոգեհանգիստ:

Կէսօրէ ետք ժամը 5-ին, Սրբազան հայրը պատարագեց Սուրբ Յովհաննէս Մկրտիչ Անկլիքան եկեղեցւոյ մէջ՝ Նորթթոթ: Հիւրաբար Սիտնիէն ներկայ էին նաեւ Սոր Մալաթիւս Մալքի Մալքի Ասորի Ուղղափառ Արքեպիսկոպոսը, Առաջնորդ Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի Ասորի Ուղղափառ Թեմին, ընկերակցութեամբ Օքլանտի Ասորի եկեղեցւոյ ծխական խորհուրդի անդամներուն եւ իրենց տիկիններուն: Սիտնիէն ժամանած էր նաեւ Աւստրալիոյ եւ ՆԶԻ Մէլբայթ Կաթոլիկ թեմի Առաջնորդ Բոպըրթ Բապպաթ եպիսկոպոսը, որուն կ'ընկերակցէին Օքլանտի ծուխէն Անուար Ալ Խուրի եւ Ժան Փօլ Ապու Նաում վարդապետները:



Խորանին սպասարկեցին Տէր Աւետիս, Նշան Սարկաւագ, Վազգէն Ամիրզայեան իսկ Զուարթնոց դպրաց խումբը դեկավարեց եւ երգեհոնով ընկերակցեցաւ Պօղոս Սարկաւագ Քէլէշեանը: Սուրբգրային ընթերցումներ կատարեցին, Հայերէնով եւ Անգլերէնով, Տայիսա եւ Լուիզա Գրիգորեան քոյրերը: Սրբազան հայրը տուաւ յաւուր պատշաճի քարոզ Խաչվերացի վերաբերող եւ քաջալերեց հաւատացեալները մասնակից դառնալու Հայ եկեղեցական եւ մշակութային կեանքին:



Յաւարտ Պատարագի, եկեղեցւոյ սրահին մէջ, Պատուոյ Հիւպատոս Յակոբ Երլտրզեանի եւ տիկնոջ՝ Սալբիի հրաւերով տեղի ունեցաւ ճաշկերոյթ նշելու համար Հայաստանի անկախութեան 34րդ տարեդարձը: Համայնքի անդամներէն աւելի քան 60 մասնակիցներ եւ հիւր հոգեւորականներն ու իրենց ընկերակիցները մեծապէս գնահատեցին հրաւերը, կենացներ պարպուեցան

և կատարուեցան բարեմաղթանքներ յօգուտ մեր հայրենիքին: Պարոն հիւպատոսը անգլերէն լեզուով խօսեցաւ տպաւորիչ ճառ մը, որուն յաջորդեց Սրբազան հօր Հայերէնով արտասանուած իր սրտի եւ շնորհակալութեան խօսքը, զոր անգլերէնի թարգմանեց Տիկին Սալբի Երլտըզեանը:

Երեկոն ճոխացաւ հայկական պարեղանակներով եւ երգերով պատրաստուած եւ մատուցուած ՏԻՃԷՅ Յակոբ Իսքէնտէրեանի կողմէ: Սրահի ընդհանուր դասաւորումի պատասխանատուն էր Պրն Ատիս Երլտըզեանը:



Մեպտեմբեր 20, 2025-ը անմոռանալի պիտի մնայ Օքլանտի Հայ համայնքի անդամներուն մտքերուն մէջ:

Նախքան ՆԶԻ մայրաքաղաք Ուելինկթըն մեկնիլը, Կիրակի, 21 Մեպտեմբերի վաղ առաւօտուն, Սրբազան հայրն ու իր շքախումբը, ինչպէս նաեւ ՄԳԼԻ ԾԽը, Հիւպատոսարանին մէջ, նախաճաշի հիւրերն էին Պատուոյ Հիւպատոսին: Սրբազան Հայրը իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց բոլորին եւ իր շքախումբին անունով յայտնեց իր ստացած դրական տպաւորութիւնը

Օքլանտի Հայ համայնքէն եւ վերահաստատեց իր զօրակցութիւնը անոր:

Կիրակի 21 Մեպտեմբերին, Սրբազան Հայրն ու իր շքախումբը մեկնեցան Ուելինկթըն, ուր զիրենք դիմաւորեցին Ուելինկթընի Հայկական Միութեան նախկին ատենապետ Պրն Արա Գասապեան եւ Պրն Փօլ Քուտայի:

Խումբը, օղակայանէն ուղիղ մեկնեցաւ Յոյն Ուղղափառ Եկեղեցի: Սրբազան Հայրը դիմաւորեցին Ուելինկթընի Հայկական Միութեան այժմու ատենապետուհի Մարինա Բալայեան, Դոկտ. Տէմէթրիոս Քրիսթֆօրօ՝ նախկին նախագահ Յոյն Ուղղափառ Համայնքին, Բիչըրտ

Նօպըլ Անկլիքան Քահանան եւ Պարոն Աշուր Եալտա, Ուելինկթընի Ասորի Համայնքի ներկայացուցիչ, ինչպէս նաեւ Ուելինկթընի Հայ համայնքի անդամներ: Ներկայ էին նաեւ Հայկական Միութեան վարչական անդամներ յանձինս Մուգաննա Բալայեանի (փոխատենապետ), Անեա Բալայեան-Հանալըրի Սփարոյի (ատենադպիր), եւ Զապէլ Քոնըրի (գանձապահ):

Սրբազան Հայրը պատարագեց, հաղորդութիւն տուաւ հաւատացեալներուն եւ յաւուր պատշաճի քարոզեց: Յաւարտ Պատարագի, տեղի ունեցաւ ճաշկերոյթ, որուն ընթացքին Սրբազան Հայրը արտասանեց ոգեշնչող սրտի իր խօսքը: Ներկաները կենացնէրով հանդէս եկան, տրուած ըլլալով որ օրը կը զուգադիպէր Հայաստանի Անկախութեան 34րդ տարեդարձին: Բարի գալստեան խօսքեր արտասանուեցան Մարինա Բալայեանի եւ Բիչըրտ Նօպըլ քահանային կողմէ: Այս վերջինին բարի գալստեան մաղթանքը կատարուեցաւ ըստ տեղացի ժողովուրդի (Մաօրի) բարքերուն:



Յաջորդ առաւօտ, 22 Սեպտեմբերին,

Սրբազան հայրն ու իր շքախումբը այցելեցին Ասորի Նահատակներու Յուշարձան՝ Մաքարա Գերեզմանատուն: Այցը կազմակերպած էր Պրն Աշուր Եալտա:

Սրբազան Հայրն ու իրեն ընկերակիցները Սիտնի վերադարձան 23 Սեպտեմբերին:

ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵԿԵՑՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ (ՀՀԲԿ)

Սեպտեմբերը ժիր և բեղմնաւոր ամիս էր ՀՀԲԿ-ի



անգամ մը եւս մեզի յիշեցուց մեր համայնքային ոգիին ուժը և կենսունակութիւնը: Ստորեւ կը ներկայացնենք ամսուան ընթացքին տեղի ունեցած մի քանի յատուկ աշխատանքներ.

համար, իր յատուկ առիթներով, արժեքաւոր ուսուցումներով, ուրախ

տօնակատարութիւններով և շատ աւելին:

Մենք նշեցինք Հայրերու օր՝ մեծարելով մեր համայնքի հայրերը եւ հօր կերպարը:

Ամսուան ընթացքին բազմաթիւ էին ծննդեան տարեդարձերը, որոնցմէ իւրաքանչիւրը նշուեցաւ ջերմութեամբ, սիրով եւ գեղեցիկ կարկանդակներով:

Մեր խումբը նաև մասնակցեցաւ անձնակազմ վերապատրաստող դասընթացին, որուն շնորհիւ պիտի կարենանք ալ աւելի ձեռնհաս կերպով շարունակել կատարել մեր ստանձնած յանձնառութիւնները:

Տօնակատարութիւններէն մինչև յառաջընթաց, Սեպտեմբերը



ՀՀԲԿ-Ն ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ ԿԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԷ ՏԱՐԵՑՆԵՐՈՒ ՀԱԻԱՔ ԱՐԱՐԱՏ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՄՐԱՀԻՆ ՄԷՋ՝ ԲԱՅՏ

Երկուշաբթի, Մեպտեմբեր 8-ին, ՀՀԲԿ առաջին անգամ ըլլալով, մեծ հաճոյքով հյուրընկալեց մեր համայնքի սիրելի տարեցները Արարատ Սկաուտական Մրահին մէջ՝ Բայտ: Այս յատուկ հաւաքը հնարաւոր դարձաւ Արարատ-Նայիրիի Վարչութեան հետ հիանալի համագործակցութեան շնորհիւ: Միջոցառումը հոգեկան մեծ գոհունակութիւն պատճառեց: Շատ մը մասնակից տարեցներ վայելեցին ուրախ յետմիջօրէ մը: Անոնց ոգևորութիւնը մեզ ա՛լ աւելի ոգեւորեց:

Մենք երախտապարտ ենք մեր համայնքին մեր վրայ ունեցած վստահութեան և ցուցաբերած աջակցութեան համար, իսկ մենք կը շարունակենք յանձնառու մնալ ընդլայնելու այն ծրագրերը, որոնք կ'ոգեշնչեն և ուրախութիւն կը պարգևեն մեր տարեցներուն:



TULIP TIME ՓԱՌԱՏՈՆ ԱՅՅԸ ԿՈՒՐԱԽԱՅՆԷ ՄԵՐ ՄԵԾԱՀԱՍՍԱԿՆԵՐԸ



Այս գարնան, **26 Մեպտեմբեր** 2025-ին, ՀՀԲԿ յաճախող աւելի քան 45 տարեցներ եւ կամաւոր աշխատակիցներ վայելեցին գեղեցիկ օր մը Southern Highlands ի «Կակաչներու Ժամա-նակ» ամենամեայ ծաղիկներու փառատօն այցելելով:

Սրտառուչ փորձառութիւն էր, ծաղիկներու ցուցադրութիւնը՝ ապշեցուցիչ եւ ուրախացնող: Վառ կակաչներու եւ գարնանային մթնոլորտի մէջ միասնական ճաշը ուրախութեամբ լեցուց մեր հոգիները: Մենք շատ շնորհակալ ենք մեր նուիրեալ անձնակազմի անդամներուն և կամաւորներուն, որոնք հնարաւոր դարձուցին այս պտոյտը, ինչպէս նաեւ մեր հրաշալի տարեցներուն, որոնց ժպիտները օրը դարձուցին անմոռանալի:

ՀՀԲԿ-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐ» ՓԱՌԱՏՕՆԸ ԿԸ ԾԱՆՕԹԱՑՈՒԻ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ ԵՒ ԿԸ ՃԱՆԱԶՈՒԻ

Հայ համայնքի բարեկեցութեան կեդրոնին (ՀՀԲԿ) համար պատուաբեր էր Նիւ Սաութ Ուելզի խորհրդարանէն ստանալ **Համայնքի Ճանաչման Հաստատում**, տրուած խորհրդարանի անդամ Պարոն Թիմ Ճեյմսի կողմէ:

Այս պաշտօնական ճանաչումը կը հաստատէ ՀՀԲԿ-ի ամենամեայ «Հայաստանի օր» փառատօնի նշանակութիւնն ու յաջողութիւնը, որով կ'արժեւորուին հայկական մշակոյթը, ժառանգութիւնը և համայնքային ոգին:

Մենք հպարտ ենք տեսնելով, որ մեր մշակոյթը իրազեկելու և միասնութիւն խթանելու մեր ջանքերը ճանաչում գտած են նահանգային մակարդակով: «Հայաստանի օր» փառատոնը դարձած է մեր համայնքին համար խիստ կարևոր միջոցառում, և մենք շնորհակալ ենք մեր տեղական ներկայացուցիչներուն իրենց շարունակական աջակցութեան համար:

Մենք մեր անկեղծ շնորհակալութիւնը կը յայտնենք խորհրդարանի անդամ Թիմ Ճեյմսին և անոր գրասենեակի պաշտօնէութեան Աւստրալահայ համայնքին իրենց անվերապահ աջակցութեան և շարունակական համագործակցութեան համար:



ՅԱՒԱԿՑԱԳԻՐ

Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս
Նաւասարդեանը, Թեմական Խորհուրդը եւ
Փարոսի Խմբագրութիւնը իրենց խոր
ցաւակցութիւնը կը յայտնեն
Առաջնորդարանի Տիկնանց Յանձնախումբի
անդամուհի Տիկին Էլիզապէթ (Քլզի)
Նաճարեանի, Ճորճ Սարկաւազ Նաճարեանի
և անոնց ընտանիքի անդամներուն իրենց հօր
եւ մեծ հօր

Ճորճ Քլզի Մուրաւեանի

մահուան առիթով, որ տեղի ունեցաւ 25
Սեպտեմբեր 2025-ին: Յուղարկաւորութեան
արարողութիւնը տեղի ունեցաւ 30
Սեպտեմբերին, հանդիսապետութեամբ Գերշ.
Տէր Վարդան Եպս Նաւասարդեանի:
Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:



IN SYMPATHY

With the Primate His Grace Bishop Vardan Navasardyan, the Diocesan Council, and Paros Editorial expresses its deep condolences to Diocesan Ladies Guild member Mrs Elizabeth (Kalzi) Najarian, Deacon George Najarian and their extended family on the passing of their dear father and grandfather

Georges Kalzi (Mouradian)

who entered his eternal rest on 25 September 2025. The funeral was held in the Armenian Aposolic Church of Holy Resurrection on 30 September 2025 presided by His Grace Bishop Vardan Navasardyan.
May Almighty God bring comfort at this difficult and warm memories live on.

Blessed be the memory of the righteous.



ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԷՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՌԻԴԵՐՁԸ
ԳԻՏԵԼԻՔԻ, ԳԻՐԻ ԵՒ ԴՊՐՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ

Գիտելիքի, գրի և դպրության օրուայ առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում և շնորհաւորում աշակերտներին, ուսանողներին և կրթության գործի մշակներին:

Բնացության շնորհը և գիտելիքների ընկալունակությունը Աստուծոց տրուած պարգևներ են, որ բարիք են ստեղծում, երբ մարդկային կեանքը խարսխուում է առ Աստուած հաւատի և տէրունաւանդ պատգամների վրայ: Սուրբ Գիրքն ուսուցանում է.



«Ճանաչել իմաստութիւնն ու խրատը, իմանալ հանճարի խօսքերը: ... Եւ երբ իմաստութիւնը մտնի սրտիդ մէջ և գիտութիւնը ախորժելի լինի հոգուդ, այն ժամանակ բարի խոհերը պիտի զգուշացնեն քեզ և արդար մտքերը քեզ պիտի պահպանեն, որպէսզի փրկութիւն գտնես. . . » (Առակ. 1. 2, 2. 10-12): Այս գիտակցութեամբ է ապրել մեր ժողովուրդը՝ գիտելիքի հանդէպ անխախտ սէրն իր հոգում, որով և դարերի հոլովոյթում յաղթահարուել են ժամանակի փորձութիւնները, ստեղծուել է հոգեմտաւոր մեր հարուստ ժառանգութիւնը: Միբլի աշակերտներ և ուսանողներ, այսօր ձեզ համար սկսում է եռանդուն աշխատանքի, գիտելիքների իրացման ու արժէքների ճանաչման, հոգևոր ու մտաւոր հասունացման ևս մէկ շրջան: Հայրական Մեր պատգամն է ձեզ, որ ջանասիրութեամբ հետևեք ուսումնառութեան ձեր ընթացքին, զօրանաք առ Աստուած և առ հայրենին սիրոյ մէջ, որ կարող լինեք ամբարած ձեր գիտելիքները ազգային բարձր գիտակցութեամբ ծառայեցնել մեր ժողովրդի բարօրութեանն ու առաջընթացին:

Ուժ ու եռանդ ենք մաղթում մանկավարժներին՝ իրենց սաներին առաջնորդելու դէպի գիտութեան ու ճանաչողութեան հրաշալի աշխարհ, կրթելու նրանց Մահակ-Մեսրոպեան ոգով, որ հասակ առնեն որպէս մեր ժողովրդի արժանաւոր զաւակներ և մեր պետութեան պատասխանատու քաղաքացիներ:

Մեր աղօթքն է, որ Բարին Աստուած խաղաղ պահի հայրենի մեր երկիրն ու ժողովրդին ի սփիւռս աշխարհի: Թող Տէրը Իր շնորհներով հոգու պայծառութիւն և ուշիմ միտք պարգևի մեր բոլոր զաւակներին և առատօրէն օրհնի ուսման ու կրթութեան գործի նուիրեալների ջանքերը:

Բարի, օրհնեալ ուսումնական նոր տարի:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒՄՆ ԱՌԻԹՈՎ**

Այսօր, Մեպտեմբերի 2-ն է՝ Արցախի Հանրապետության անկախության հռչակման օրը, որը դիմա-
ւորում ենք մեր կրած կորուստներից ամոքման յոյսով, Աստծոյ զօրակցության հաւատով:

Արցախի անկախության երեսուներորդ տարեդարձի նախասեմին՝ 2020-2023 թուականներին, ողբեր-
գական իրադարձություններ ծաւալուեցին: Աղբբեջանի սանձազերծած պատերազմի և ցեղասպանական
գործողությունների հետևանքով բռնազավթուեց և ամբողջապէս հայաթափուեց հայոց Արցախ աշխարհը,
հազարաւոր հայորդիներ զոհուեցին, պղծուեցին ու ոչնչացուեցին բազմաթիւ սրբավայրեր, և մինչ այսօր
Բաքոււմ շարունակում են պատանդ մնալ Արցախի պետական այրեր և զինուորականներ:



Այս նուիրական օրը մեր խո-
նարհումն ենք բերում Արցախի
անկախության, արցախահա-
յության ապահովության հա-
մար ամենաթանկագինը,
իրենց կեանքն ընծայած մեր
քաջորդւոց յիշատակի առաջ:
Մեր աղօթքն ենք
բարձրացնում առ Աստուած՝
հայցելով շուտափոյթ
վերադարձ գերեալ և անյայտ
կորած մեր զաւակներին,
խաղաղութիւն մեր երկրին ու
ժողովրդին:

Բարձր ենք գնահատում բոլոր
երկրների և միջազգային կա-
ռոյցների ջանքերը, որոնք շա-

րունակւում են ուղղուած մնալ Արցախի ողբերգական պատերազմի ծանր հետևանքների
յաղթահարմանը, տարածաշրջանում սպառնալիքներ ու պարտադրանք բացառող կայուն և երկարատև
խաղաղության հաստատմանը:

Արցախի Հանրապետության անկախության տարեդարձը յիշարժան առիթ է՝ արտայայտելու խաղա-
ղության գաղափարին մեր ժողովրդի նուիրումութիւնը, թօթափելու նաև յարմարուողական ու պար-
տուողական տրամադրութիւնները՝ արժանապատուօրէն յաղթահարելու համար մեր երկրի առջև ծա-
ռացած մարտահրաւերներն ու փորձութիւնները:

Հայրապետական մեր յորդորն է, որ բազմապատկենք մեր ջանքերը՝ միջազգային հանրության աջակ-
ցութեամբ պաշտպանելու Արցախի մեր տեղահանուած ժողովրդի իրաւունքները, ոչնչացումից փրկելու
հայկական հոգևոր-մշակութային բազմադարեայ ժառանգութիւնը և հայրենիք վերադարձնելու գեր-
եկարուած մեր զաւակներին: Համախմբուենք յանուն մեր պետականութեան զօրացման ու ամրա-
պնդման, մեր երկրի տարածքային ամբողջականութեան անխախտելիութեան պահպանման: Անաղարտ
պահենք հայկական մեր ինքնութիւնն ու ազգային արժէքները՝ յուսառատ մեր հայացքը միշտ ուղղելով
դէպի մեր կեանքի շնորհաբեր ապագան:

Աղօթում ենք, որ Աստծոյ ողորմութեամբ վերականգնուի արդարութիւնը, և մեր ազգի զաւակներն ապ-
րեն խաղաղութեան ու բարօրութեան մէջ: Թող Աստուած պահապան լինի մեր երկրին ու ժողովրդին ի
Հայաստան և ի Սփիւռս: Ամէն:

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԷՋ ՄԿՍԱԻ ՆԻԿԻՈՅ ՏԻԵՁԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ 1700-ԱՄԵԱԿԻՆ ԶՕՆՈՒԱԾ ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ 4 Սեպտեմբեր 2025ին սկսաւ «Ապրելով Հաւատամքն այսօր. Նիկիայի տիեզերաժողովի 1700-ամեակի յիշատակում» միջ-եկեղեցական քառօրեայ համաժողովը: Մայր Աթոռի Միջ-եկեղեցական յարաբերութեանց բաժնի նախաձեռնութեամբ կազմակերպուած հաւաքին նպատակն է համախմբել երիտասարդ հոգեւորականները՝ համատեղ խորհելու Եկեղեցւոյ առջեւ ծառացած մարտահրաւերներու շուրջ, ուսումնասիրելու Նիկիական Հանգանակի իմաստն ու արդիականութիւնը մեր օրերուն եւ խթանելու եղբայրութեան ու համագործակցութեան ոգին:

Համաժողովին մասնակցեցան նուիրապետական Աթոռներու, ինչպէս նաեւ քոյր եկեղեցիներու, տարբեր յարանուանութիւններու եւ միջ-եկեղեցական կառոյցներու ներկայացուցիչներ:

Ժողովը բացուեցաւ Տէրունական աղօթքով: Ապա ողջոյնի խօսք արտասանեց Մայր Աթոռի Միջ-եկեղեցական յարաբերութեանց բաժնի տնօրէն Հոգ2. Տ. Գարեգին Վրդ. Համբարձումեան: Այնուհետեւ, օրհնութեան խօսքով հանդէս եկաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբութիւնը ընդգծեց, որ Նիկիոյ տիեզերական ժողովը որոշիչ նշանակութիւն ունեցաւ ոչ միայն Քրիստոսի Ս. Եկեղեցւոյ ուղղափառ հաւատքի պահպանութեան, այլեւ տէրունաւանդ առաքելութեան առաւել արդիւնաւորման համար: «Առաջին տիեզերական ժողովը համախմբեց բազում Եկեղեցիներ՝ միասնաբար հակադարձելու եկեղեցական կեանքը յուզող երեւոյթներուն, աւետարանական ճշմարտութիւնները խեղաթիւրդ փորձերուն, զերծ պահելու հաւատքը կամայական մեկնաբանութիւններէ ու տարաբնոյթ մոլորութիւններէ: Ընդհանրական Եկեղեցին Նիկիոյ առաջին տիեզերական ժողովի գումարումով, որուն Հայոց Եկեղեցին մասնակցեցաւ Արիստակէս Հայրապետ՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Կաթողիկոսի որդին, սահմանեց Նիկիական Հանգանակը եւ հաստատեց Քրիստոսի Աստուածութեան վերաբերեալ Եկեղեցւոյ անխախտելի վարդապետութիւնը: Այն դարձաւ ամուր խարիսխը քրիստոնէական հաւատքի, որով նաեւ սահմանուեցան



աստուածաբանական եզրեր եւ հիմնադրոյթներ, եւ բանաձեւուեցաւ Քրիստոսի Եկեղեցին որպէս մէկ, ընդհանրական եւ առաքելական: Ժողովին ընդունուած քըսան կանոնները եւս կարեւոր ուղենիշ դարձան Եկեղեցւոյ ծիսականոնական կեանքին մէջ, նուիրապետական կարգի ընկալումներուն մէջ», նշեց Վեհափառ Հայրապետը՝ փաստելով, որ Նիկիոյ առաջին տիեզերական ժողովը, աշխարհի ծագերէն 318 հայրապետներու համախմբումով, դարձաւ վահանը քրիստոնէական հաւատքի եւ վկայութիւնը

Եկեղեցւոյ ընդհանրականութեան եւ միասնականութեան:

Ամենայն Հայոց Հայրապետը արձանագրեց, որ Նիկիական Հանգանակը այսօր եւս կը միատրե տարբեր մշակոյթներէ ու միջավայրերէ եկող քրիստոնեաներ եւ կը շարունակէ մնալ ոյժ եւ զօրութիւն պարգեւող քրիստոնեական հաւատքի անեղծ ակունքը:

Համաժողովի ընթացքին բանախօսութիւններով ու զեկոյցներով հանդէս եկան զանազան եկեղեցիներէ, ինչպէս նաեւ միջ-եկեղեցական կառոյցներէ ներկայացուցիչներ: Տեղի ունեցան քննարկումներ:

Ժողովի մասնակիցները այցելեցին սրբավայրեր ու թանգարաններ, մասնակցեցան միջ-եկեղեցական աղօթքներու, ծանօթացան Հայոց Եկեղեցւոյ ու ժողովուրդի հոգեւոր-մշակութային ժառանգութեան:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ ՈՒԽՏԱԽՈՐՆԵՐԸ



Սեպտեմբեր 8-ին, Վեհափառ ընդունեց ԱՄՆ Հայոց Արեւելեան թեմի Չելմսֆորտ քաղաքի Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ համայնքի ուխտաւորները, ուղեկցութեամբ հոգևոր հովիւ Արժ. Տէր Խաչատուր քահանայ Քեսապլեանի:

Տէր հայրը ընդգծեց, որ Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ համայնքը, ըլլալով հնագոյն համայնքներէն մին, ամուր պահած է իր ինքնութիւնը, հաւատքն ու հայրենասիրական ոգին: Տէր Հայրը իր երախտագիտութիւնը յայտնելով Նորին Սրբութեան ընդունելութեան

համար, յաւելեց, որ ուխտաւորները Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին են այցելած իրենց ուխտը վերանորոգելու և հայրենիքի հետ կապը զօրացնելու համար:

Հայոց Հայրապետը աղօթքով յիշեց Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ և համայնքի նուիրեալ հիմնադիրները, որոնք, վերապրելով համիտեան ջարդերէն, ԱՄՆ-ի մէջ ամուր հաւատքով ու հայրենասիրական ոգիով վերակերտեցին իրենց ազգային կեանքը, և համախմբուելով Եկեղեցւոյ շուրջ՝ պահպանեցին իրենց ինքնութիւնը:

Նորին Սրբութիւնը պատգամեց հաւատքով զօրացած վերադառնալ իրենց համայնքը և ամուր պահել կապը հայրենիքի ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ:

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Հայրապետական տնօրինութեամբ կատարուեցան նոր նշանակումներ:

Արթիկի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Նարեկ եպիսկոպոս Աւագեանը, համատեղութեան կարգով, առժամապէս նշանակւած է Շիրակի թեմի հոգևոր տեսուչ՝ առաջ-նորդական լիազօրութիւններով:

Հոգեշնորհ Տ. Զաքարիա ծայրագոյն վար-դապետ Բաղդումեանը նշանակուած է Մայր Աթոռի Քարոզչական կեդրոնի տնօրէն՝ ազատելով Քրիստոնեական դաստիարակութեան կեդրոնի տնօրէնի պարտականութիւններէն:

ԽԱՉՎԵՐԱՅԻ ՏՕՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄՆԻ ՄԷՋ

Մեպտեմբերի 14-ին, բերկրառատ օրուան առիթով, Միածնաէջ Մայր Տաճարին մէջ Պատարագ մատուցեց Գերաշնորհ Տ. Արտակ եպիսկոպոս Տիգրանեանը:

Իր քարոզին մէջ ան ընդգծեց ներկայ փոթորկալից աշխարհին մէջ անձնական խաչը վերցնելու պատրաստականութեան, փրկարար խաչին ապաւինելուն և խաչեալ Քրիստոսի ճանապարհով ընթանալու կարևորութիւնը: «Եթէ մէկը կը կամենայ հետևիլ ինձի, թող ուրանայ իր անձը, վերցնէ իր խաչը և գայ իմ ետևէն» (Մատթ. ԺԶ 24):

Ինչպէս տեսնում ենք, առաջին պայմանը, որ Քրիստոս դնում է, իրեն կամաւոր հետևելու ցանկութիւնն է: Աւետարանն իսկ վկայում է, որ Քրիստոս երբեք չի պարտադրել, չի ստիպել իրեն հետևել, մտնել խաչի ծառայութեան տակ: Շատերը նրան լսեցին, ոմանք չհետևեցին, իսկ ովքեր վերջնական որոշում կայացրին, դարձան նրա հետևորդները: Բայց նոյնիսկ ամենամերձաւոր հետևորդները երբևէ զրկուած չեն եղել ընտրութեան ազատութիւնից», ըսաւ Սրբազանը, հաստատելով, թէ ան որ կը



ճաշակէ Տէր Յիսուսի խօսքի զօրութիւնը, յաւիտենական կեանքի քաղցրութիւնը, երբեք չի հեռանար Փրկիչէն:

Արտակ եպիսկոպոս նշեց, որ աշխարհի մէջ մեծագոյն սխրանքները, ձեռքբերումները, յաղթանակները իրականութիւն դարձած են անձնագոհութեամբ եւ սեփական եւ-ը ստորադասելով, իսկ քրիստոնէութեան մէջ ատոր մեծագոյն օրինակը Գողգոթան է: «Մեզանից իւրաքանչիւրի ճանապարհը պիտի անցնի Գողգոթայով, որպէսզի մենք ինչ-որ չափով կարողանանք հասկանալ այն մեծ զոհողութիւնը, որ Քրիստոս արեց մեզ համար:

Գողգոթան թէն փոքրիկ մի բլուր է, սակայն իր կարևորութեամբ տեսանելի է աշխարհի չորս ծագերից, որտեղից լոյսն է ճառագում: Այն աշխարհի բոլոր ճանապարհների խաչմերուկն է: Եթէ մեր կեանքի ճանապարհը չի անցնում Գողգոթայով, ապա ոչ մի երաշխիք չունենք, որ այն չի տանի դէպի դժոխք: Իսկ Գողգոթան պայքարի, զոհողութեան ու յաղթութեան բարձունքն է: Առանց պայքարի ու զոհողութեան չկայ փրկութիւն», արձանագրեց Սրբազան Հայրը:

Աւարտին, Արտակ եպիսկոպոս պատգամեց մերժել եասսիրութիւնն ու փառամոլութիւնը, հրաժարիլ նիւթապաշտութեան ու աշխարհատենչութեան խոտոր ընթացքներէն, վերցնել խաչը, տէր ըլլալ Քրիստոսին նմանելու իրենց իրաւունքին ու պարտականութեան, երթալ Անոր ետևէն մինչև Գողգոթա և յաղթահարել Գողգոթայի տառապալից բլուրն ու մահուան ստուերները:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՀԱՆԴԴՈՒՄ ՈՒՆԵՑԱԻ ՀՈՈՄԻ ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ ՀԵՏ

Մեպտեմբեր 16-ին, Վեհափառ Հայրապետը պատուիրակութեամբ մը և Սուրբ Աթոռի Քրիստոնէական միութեան խթանման բաժնի նախագահ Քարտինալ Կուրտ Քոխի ուղեկցութեամբ Վատիկանէն մեկնեցաւ Կաստել Գանդոլֆոյի առաքելական պալատ, ուր հանդիպում ունեցաւ Հռոմի Սրբազան

Քահանայապետ Լևոն 14-րդ Պապին հետ:

Եղբայրական ողջագուրումն էտք,երկու Հովուապետերը ունեցան առանձնագրոյց:

Վեհափառ շնորհաւորեց Պապը իր ընտրութեան եւ ծննդեան 70-ամեայ նշանակալի յոբելեանին առիթով, հայցելով, որ Երկնաւոր Տէրը ուժ և կարողութիւն շնորհէ անոր և առատ պտուղներով արդիւնաւորէ Նորին Սրբութեան հովուապետութիւնը Աստուծոյ փառքին և մարդկութեան խաղաղ ու բարօր կեանքին համար:

Վեհափառ Հայրապետը գոհունակութեամբ անդրադարձաւ, որ երկու Եկեղեցիներու միջև եղբայրական կապերը ամրապնդուած են շնորհառատ հանդիպումներու և հաւատքի համատեղ վկայութիւններու միջոցով, յիշելով երջանկայիշատակ Սուրբ Յովհաննէս Պօղոս Երկրորդ Պապին այցելութիւնը Հայաստան 2001 թուականին, ապա 2016-ին՝ երջանկայիշատակ Ֆրանցիսկոս Պապին Սուրբ Էջմիածնի մէջ հիւրընկալելու բարեպատեհ առիթը «այց առաջին քրիստոնէայ երկիր» խորագրով ուխտագնացութեան կապակցութեամբ:



Երկու եկեղեցիներու փոխ-յարաբերութիւններու յիշարժան հանգրուաններէն Նորին Սրբութիւնը նկատեց 2015 թուականին Հայոց ցեղասպանութեան հարիւրամեակին կապակցութեամբ Սուրբ Պետրոսի տաճարին մէջ մատուցուած սրբազան Պատարագը և Հայոց Եկեղեցւոյ մեծագոյն սուրբերէն Գրիգոր Նարեկացիի հոչակումը որպէս Տիեզերական Եկեղեցւոյ վարդապետ:



Ամենայն Հայոց Կաթողիկոսը վստահութիւն յայտնեց, որ երկու Եկեղեցիներու յարաբերութիւնները կը շարունակեն զարգանալ նոյն եղբայրական ոգիով ու ջերմութեամբ՝ արդիւնաւորուելով նորանոր բարի համատեղ իրագործումներով: Զրոյցի ընթացքին երկու Հովուապետերը անդրադարձան աշխարհի մէջ տեղի ունեցող արհաւիրքներուն ու մտահոգիչ զարգացումներուն, Հայաստանի և հայ ժողովուրդի առջև ծառացած մարտահրաւերներուն: Հռոմի Սրբազան Քահանայապետին ուշադրութեան յանձ-

նուեցան նաև Արցախէն տեղահանուած արցախահայութեան հիմնախնդիրները, ոչնչացման վտանգին առջև կանգնած Հայ հոգևոր և մշակութային ժառանգութեան պահպանութեան, ռազմագերիներու և պատանդներու ազատ արձակման հրամայականը:

Հովուապետերը կարևորեցին Եկեղեցիներու առաքելութիւնը աշխարհի մէջ արդարութեան ու խաղաղութեան հաստատման, ժողովուրդներու համերաշխ գոյակցութեան ապահովման մէջ:

Անոնք ընդգծեցին անհրաժեշտութիւնը միաւորելու Եկեղեցիներու ջանքերը յանուն Աւետարանի լոյսի տարածման, մարդկանց իրաւունքներու պաշտպանութեան և բարօր ու ապահով աշխարհի կերտման:

Վեհափառը Լևոն 14-րդ Պապին հրաւեր ուղղեց այցելելու Հայաստան:

Հանդիպման աւարտին, պատուիրակութեան անդամները ստացան Պապին օրհնութիւնը: Տեղի ունեցաւ նուէրներու փոխանակում:

Վեհափառը նաեւ Հռոմի Սուրբ Մարիամ Տաճարին մէջ, երջանկայիշատակ Ֆրանցիսկոս Պապի շիրիմին առջև աղօթք բարձրացուց անոր հոգւոյն հանգստութեան համար:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱԽՈՐԱԿԱՆ ՌԻԴԵՐՁԸ ԱՆԿԱՌՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Անկախութեան տօնի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք բերում համայն մեր ժողովրդին՝ ի հայրենիս և ի սփիւռս:

Անկախ պետականութեան վերահաստատումը դարաւոր նուիրական իղձ էր, որը մեր ժողովուրդն իրականացրեց հաւաքական կամքով, իր բարօր ու խաղաղ կեանքը կառուցելու և ազգային արժէքներով ապրելու ձգտումով:

Այսօր մեր երկիրն ու ժողովուրդը անցնում են ծանր փորձութիւնների միջով՝ դիմագրաւելով հետպատերազմեան դժուարութիւններն ու նեղութիւնները, արտաքին և ներքին բազում մարտահրաւերներն ու հիմնախնդիրները:

Պետութեան հանդէպ մեր պատասխանատուութիւնը չի կարող հանդուրժել անարդարութիւն ու անօրինութիւն, ատելութիւն ու պառակտումածութիւն, կեղծիք և խաբէութիւն, այլ պիտի առաջնորդի մեր ժողովրդին համախոհութեան ու միասնականութեան, որպէսզի կարողանանք գտնել ներկայ ծանր իրավիճակներից դուրս գալու ապահով ուղիները: Պետութեան հանդէպ մեր սէրը պիտի դարձնենք վերյառնումի նախանձախնդրութիւն, միմեանց հանդէպ վստահութիւն ու հոգատարութիւն և յանձնառութիւն ու նուիրում՝ ամեն աշխատանքում ու բնագաւառում: Անկախութեան տօնը պատգամ է հաւատարիմ մնալու ազգային զարթօնքի իղձերին, մեր արժէքներին ու սրբութիւններին և զօրացնելու ու շէնացնելու մեր պետութիւնը: Միայն այսպէս կարող ենք ունենալ խաղաղ ու բարօր ապագայի յոյս ու հեռանկար՝ սաղմոսերգուի հետ հանապազ հայցելով Երկնաւորից. «Յիշի՛ր մեզ, Տէ՛ր, ի հաճութիւն Քո ժողովրդի, և այցելի՛ր մեզ Քո շնորհելիք փրկութեամբ» (Սաղմ. 105. 4):

Աղօթում ենք, որ Աստուած խաղաղութիւն պարգևի մեր հայրենիքին և Իր Սուրբ Հոգու իմաստութիւնն ու առաջնորդութիւնը շնորհի մեր ժողովրդին՝ յոյսով ու հաւատով ուժ ու զօրութիւն գտնելու մարտահրաւերներին դիմակայելու և փայփայելու ու սերնդէ-սերունդ արժուրելու Անկախութեան տօնի պանծալի խորհուրդը:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ «SAVE ARMENIA» ՅՈՒԴԱՅԱ-ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Սեպտեմբեր 23-ին, Վեհափառը ընդունեց «Save Armenia» Յուդայա-քրիստոնեական դաշինքի տնօրեն



Մաթիաս Պերտուլլան և դաշինքի տնօրեններու խորհուրդի անդամ, քաղաքացիական իրաւունքի պաշտպան, քրիստոնեական հաւատքի դեսպան, Մարթին Լութեր Քինկ կրտսերի զարմուհի դոկտոր Ալվեդա Քինկը:

Զրոյցի ընթացքին, Վեհափառը իր գրնահատանքը յայտնեց դաշինքի անդամներուն և աջակիցներուն Հայաստանին ու հայ ժողովուրդին ցուցաբերուող զօրակցութեան և միջազգային հարթակներու մէջ հայութեան ձայնը լսելի դարձնելու ջանքերուն համար:

Անդրադարձ կատարուեցաւ Հայաստանի առջև ծառացած բոլոր մարտահրաւերներուն: Նորին Սրբութիւնը կարեւորեց բարեկամ երկրիներու եւ մի-

ջազգային հանրութեան ջանքերը՝ ի նպաստ տարածաշրջանին մէջ արդար և կայուն խաղաղութեան հաստատման:

Դաշինքի ներկայացուցիչները իրենց զօրակցութիւնը յայտնեցին Հայոց Եկեղեցիին և հայ ժողովուրդին՝ կիսելով մտահոգութիւնները արցախահայութեան ոտնահարուած իրաւունքներուն և Արցախի հայկական հոգևոր-մշակութային ժառանգութեան պահպանութեան կապակցութեամբ, ընդգծելով, որ յիշեալ հարցերը պիտի շարունակեն բարձրաձայնել Միացեալ Նահանգներու պետական բարձրագոյն ատենաններուն մէջ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՅԽՇՏԵՏ-ԻՆԳՈՒՇՏԱԴԻ ԿԱԹՈՒԿ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Սեպտեմբեր 24-ին, Վեհափառը ընդունեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելած Գերմանիոյ Այխշտետ-Ինգոլշտադի կաթոլիկ համալսարանի Քրիստոնեայ արեւելքի աստուածաբանութեան ամբիոնի փրոֆեսորադասախօսական կազմը, Աստուածաբանական ֆակուլտետի ուսանողները, գլխավորութեամբ ամբիոնի վարիչ փրոֆեսոր Թոմաս վարդապետ Կրեմերի և Կոլլեգիում Օրիենտալէի տնօրեն Օլէկսանդր աւագ քահանայ Պետրինկոյի:

Հայր Թոմասը Ամենայն Հայոց Հայրապետին ներկայացուց համալսարանի կրթական ծրագրերը և գործունէութիւնը՝ տեղեկացնելով նաև, որ Հայաստան այցի նպատակն է ծանօթանալ հայ ժողովուրդի



պատմություն, հոգևոր-մշակութային արժեքներուն և գիտական ոլորտի մէջ համագործակցութեան հեռանկարներուն:

Հայոց Հովուապետը հաստատեց որ համալսարանի ներկայացուցիչներուն այցը Հայաստան և ուխտագր-նացութիւնները տարբեր սրբավայրեր առաւել կը նպաստեն երկրի պատմամշակութային ու հոգևոր ժառանգութեան հաղորդակից դառնալուն և հոգևոր փորձառութիւնը զօրացնելուն: Ան անդրադարձաւ Հայ ժողովուրդի կեանքին մէջ Սուրբ Էջմիածնի առանցքային դերակատարութեան, ընդգծեց, որ քրիստոնէական հաւատքը դարեր շարունակ եղած է ազգային, հոգևոր արժեքներու և Հայուն ինքնութեան կերտողը:

Վեհափառը գոհունակութեամբ ընդգծեց նաև Քոյր Եկեղեցիներու ու միջ-եկեղեցական կառոյցներու և Հայոց Եկեղեցոյ միջև ձևաւորուած սերտ կապերը, որոնց շնորհիւ այսօր կ'իրականանան տարբեր կըրթական, ընկերային ու մշակութային ծրագրեր: Ան պատասխանեց հիւրերու հարցերուն:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ

ՄԻՇԻԿԸՆԻ ՀԲԸՄ «ԱԼԵՔ և ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ» ԱԿԱԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

Սեպտեմբեր 26-ին, Վեհափառը հիւրընկալեց Միջիգանի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ) «Ալեք և Մարի Մանուկեան» աւագ դպրոցի աշակերտները, ուղեկցութեամբ ՀԲԸՄ Հայաստանի նախագահ տիար Վազգէն Եագուպեանի, որ ընդգծեց, որ ուխտագնացութեան նպատակն է զօրացնել սփիւռքի հայորդիներու կապը հայրենիքի և Եկեղեցոյ հետ, ծանօթացնել հայ մշակոյթին և հոգևոր ժառանգութեան:



Նորին Սրբութիւնը ընդգծեց, որ մեծ շնորհ ու պատասխանատուութիւն է ըլլալ «Ալեք և Մարի Մանուկեան»

դպրոցի սան, քանզի իրենց աչքերուն առջև ունին ազգային մեծ բարերարներ Ալեք և Մարի Մանուկեաններու լուսաւոր օրինակը: Այս առնչութեամբ Հայոց Հայրապետը պատգամեց առաւել նախանձախնդրութեամբ և ջանասիրութեամբ շարունակել իրենց ուսումնառութիւնը և ձեռք բերած գիտելիքներն ու հմտութիւնները ծառայեցնել ինչպէս տեղի հայ համայնքին, այնպէս ալ՝ հայրենիքի առաջընթացին, այդպիսով պայծառացնելով նաև մեծանուն հայորդիներու բարի անունն ու յիշատակը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ

ՊՐԱԳԻԼԻՈՑ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՈՒՌՏԱԻՈՐՆԵՐԸ

Սեպտեմբեր 29-ին Վեհափառը ընդունեց Պրագիլիոյ հայոց թեմի ուխտաւորները, ուղեկցութեամբ Պրագիլիոյ թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Նարեկ եպիսկոպոս Պերպերեանի:

Վեհափառը կարևորեց աշխարհասփիւռ հայոց թեմերէն նման ուխտագնացութիւններու կազմակերպումը դէպի Հայրենիք և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, որոնք ազգային ինքնութեան պահպանման և միասնականութեան գրաւականն են: Ան նկատեց, որ հայրենիքի նկատմամբ սիրով ու ամուր հաւատքով մեր ժողովուրդի զաւակները դիմագրաւած և յաղթահարած են պատմութեան ընթացքին մեզի բաժին հասած բազմաթիւ փորձութիւններ, նաև վերապրելով Հայոց Ցեղասպանութիւնը՝ տարբեր երկիրներու մէջ վերակերտած ազգային-հոգևոր կեանքը և իրենց կարևոր նպաստը բերած հայրենաշինութեան գործին:

Վեհափառը յորդորեց ամեն ջանք ի գործ դնել՝ զօրացնելու իրենց համայնքը և օգտակար ծառայութիւն բերելու Ազգին, Հայրենիքին և Եկեղեցիին:

Diocesan News

Tuesday 2 September – Accompanied by Reverend Father Ashot Abrahamyan, His Grace Bishop Vardan Navasardyan, the Primate, received Cor-Bishop Varghese Thomas, spiritual leader of the Indian Orthodox Church of Sydney, at the Diocesan Centre. The visit was to welcome His Grace and congratulate him on his appointment as Primate of the Diocese of the Armenian Church of Australia and New Zealand. The Bishop and his guest discussed ways to further develop the already close relationship between the two Churches. Cor-Bishop Varghese officially invited His Grace to their mother church in Glenfield to be part of the official reception of the Catholicos of the Indian Orthodox Church, during His Holiness's upcoming Pontifical Visit from India to Australia.



Wednesday 3 September – Bishop Navasardyan, accompanied by Reverend Father Avetis Hambardzumyan, received the Board members of Homenetmen Ararat and Hamazkaine Nairi Chapter at the Diocesan Centre, led by Chairman Tadeh Karamian. The visit aimed to welcome His Grace and congratulate him on his appointment as Primate. His Grace praised the recent performance of the Nairi Dance Group, as well as the singing performance of the Nairi Choir at the “Armenia Day” Festival. Issues related to the cultural and educational life of the community were discussed. Bishop Navasardyan expressed his encouragement and blessing to the Homenetmen Ararat and Hamazkaine Nairi Chapter

wishing them success in promoting Armenian culture, education, and sports.

Sunday 7 September – His Grace, accompanied by Reverend Fathers, representatives of the Diocesan and Parish Councils, representatives of Church bodies, Friends of the Diocese and Ladies’ Guild members, received Mr Sam Simonian President of the Armenian General Benevolent Union (AGBU), and his accompanying group, representatives of the AGBU Sydney Branch Committee and friends at the Diocesan Centre. Mr Simonian is in Australia on the occasion of the 35th anniversary celebrations of the founding of the AGBU Alexander School.



The Bishop introduced the guests one by one to Mr Simonian and to the members of his delegation. His Grace considered the visit of Mr Simonian and his entourage to the Diocesan Centre to be a great honour and historic. He praised the presence of the AGBU President here on the 35th anniversary of the Alexander School, which showed his respectful attitude towards the mission of the Armenian school.

Referring to the great educational progress of the TUMO Centre in the field of technology, His Grace wished that the thousands of giant projects of AGBU be crowned with success and that under the leadership of Mr Simonian, the mission of AGBU be fruitful.

In his speech, Mr Simonian first introduced his colleague Mr Elie Akilian and touched upon the fact that AGBU is a non-political organisation with its readiness to help any Armenian organisation without ideological discrimination. He reaffirmed the existing close ties between the AGBU and the Armenian Apostolic Church, which will continue during his presidency.

Mr Simonian and his companions, led by His Grace, visited the Holy Resurrection Church, where they received an explanation about the church.



Sunday 7 September – As part of the 35th anniversary celebrations of the establishment of the AGBU Alexander Primary School, a school concert was held in the Concert Hall at Chatswood Concourse under the auspices of His Grace Bishop Vardan Navasardyan. His Grace attended the celebratory event accompanied by Reverend Father Avetis Hambardzumyan and Father Ashot Abrahamyan, Diocesan Council Chairman Mr Sarkis and Alice Der Bedrossian, Holy Resurrection Church Parish Council Chairman Mr Ara Kopoushian and Honorary Chairman Mr

Bedros Zorlu. Archpriests Father Norayr Patanian and Father Barteve Karakashian as well as Chor bishop Monsignor Parsegh Sousanian of the Catholic Armenian Church and Reverend Hagop Sarkissian also attended among the clergy as did representatives of community organisations. Present among the distinguished guests were AGBU Central Board Chairman President Mr and Mrs Sam and Sylva Simonian, AGBU Council of Trustees Mr and Mrs Elie and Elzbieta Akilian and AGBU Director of Chapters and Central Board Administration Natalie Gabrelian with Mr Vicken Demirdjian.

The theme of the evening was "Honouring the Past, Embracing the Present, Inspiring the Future." As the students lined the stage in precision order, they commenced the concert with the Australian and Armenian national anthems followed by the Armenian General Benevolent Union and Alexander School anthems. The welcome addresses were presented by alumni students Mrs Ilda Zorlu-Amirghian in Armenian and Mr Sevag Keoshgerian in English, each reflecting on the values and experiences that were nurtured throughout their years at the school which shaped them to remain firm in their adult lives.





As the students' program commenced school uniforms transformed into a beautiful array of coloured Armenian costumes to blend in with the scenic watercolour backdrops transporting the audience to the hillsides of Armenia as the streamed-classes each performed folkloric dances much to the delight of the audience. Waves from parents in the audience, clapping and whistling added to the joy of the evening. Dances included "Kochari" (Year 3-4), "Hayasdan" (Years 1-2), "Armenian Highlands" (Prep-Kindergarten), "Ethnographic Dance" (Years 5-6). Students also performed two songs "Under the Southern Skies", "Moush" as well as an entertaining musical performance with percussion instruments under the conductorship of talented Mrs Zela Margossian.



Each section of the program also incorporated visual presentations of a photo montage on the three parts of the concert theme. "Honouring the Past" highlighted the vision and generous contributions of School benefactors, Mr and Mrs Alex and Marie Manoogian and Dr and Mrs Alex and Isabelle Alexander as well as the AGBU Committee of the 1980's. "Embracing the Present" reflected the life of the school from its beginning to the present day drawing attention to the



growth and development of the school's vast resources and activities. "Inspiring the Future" showcased the plans of the school with the new development of the school library and additional two classrooms for specialised learning.

The evening's program was not exclusive to the current students but also a dedication to all who have walked through the doors of Alexander School. Touching and meaningful reflections were given by inaugural graduate Mrs Nora Aprahamian-Matevossian, followed by graduates Ms Natasha Aslanian, Mr Garren Pezikian,

Mrs Lucy Amirzaian-Setrakian, Messrs Krikor Demirjian and Taniel Betchkjian. Each presentation, in either Armenian or English was a warm tribute to what constitutes the "family of Alexander School" made up of dedicated teaching and office staff, parents, alumni and the AGBU community that forge in unity to create a caring and nurturing school environment. In this atmosphere, young students have blossomed into healthy, capable and accomplished young Armenian adults with a continued vision for the importance of the school in our community.

The light shed by these youth was beautifully

reflected in an inspiring and touching "Ceremonial Walk of Light" as graduates who with lit candles proceeded in a procession to the foot of the stage as a symbol of a bright future for Alexander School.



tireless years of service of long-serving and founding teacher Mrs Seta Keoshgerian.

Mr Vahe Boyadjian reflected on the historical foundations of the School and the vision upon which it was built. He paid tribute to the late benefactors and the late AGBU Chairman Mr Zaven Tchetchenian who headed the AGBU Committee for years to bring the school project to fruition. He also thanked the school community whose support has been the backbone of the school despite times of great challenges, he said. He then invited Mr Manoug Demirjian to the stage and with Mrs Sossie Giragossian presented an appreciation plaque for his dedicated service and immense contribution to the school from the earlier years until today.

In her meaningful few short words in which she also thanked God for His guidance of the School, Mrs Sossie Giragossian invited Mr Simonian to say a few words. Accompanied by Ms Gabrelian who also presented her heartfelt words of congratulations for the occasion, they then paid a tribute to



Speeches were presented by School Principal Mr Manoug Demirjian, School Board Director and long-serving AGBU member Mr Vahe Boyadjian, School Board Chairman Mrs Sossie Giragossian, Ms Natalie Garabedian and Mr Sam Simonian.

Mr Demirjian took to the podium to deliver his message to the rousing applause of the audience and explained how the school has progressed throughout the years with its technological advancements and teaching methods to equip young students for the ever-changing times we live in whilst still maintaining their traditional and cultural values. He thanked the dedicated teaching staff and parents for their support as well as the broader AGBU and school community. In particular he noted the inspiring, creative and



Mr Vahe Boyadjian to recognise his “over 60 years of dedicated and distinguished service to AGBU Sydney and the AGBU Alexander Primary School.”

In his message Mr Simonian expressed his joy at the concert and his appreciation for the immense work being carried out at the school. He stressed the importance of keeping the school up to date with an ever-changing world emphasising the significance of AI.

Bishop Navasardyan in the closing address expressed how impressed he



was by the graduates' strong feelings toward their national identity and cultural values even though they had completed their Armenian education at Year 6. He said how from all the reflections he was extremely touched by Sevag Keoshgerian's feelings on “(the School) nurtured my identity and

deepened my connection to our Armenian roots in a way that will stay with me forever.” His Grace also stated that for him, the most notable Armenian that ever was is Mesrob Mashdots whose vision it was that to keep the Armenian identity alive it would be through maintaining its language. He said that, that vision of his continues today with the living Armenian spirit we witnessed in these children and young adult. He concluded by congratulating the AGBU community and acknowledged the future is in good hands. He then presented the school with a beautiful gold-painted iconography on behalf of the Diocese of the Armenian Church of Australia and New



Zealand on the occasion of the 35th anniversary.

The evening was closed with the Lord's Prayer recited by the students followed by His Grace with the Prayer of Protection.

Monday 8 September – Accompanied by Secretary of the Diocesan Council Mr Kevork Tchaprazian, His Grace visited the Hamazkaine Arshak and Sophie Galstaun College where he was welcomed by the Chairman of the Hamazkaine Regional Committee Mr Kevork Vartanian, Mr Harmik Hacobian member of the College's Board, the Principal Mr. Eddie Demirdjian, and the teaching staff.



At the entrance to the Nalbandian Hall, His Grace performed the traditional blessing of salt and bread, where the students of the College were waiting for him. After the welcoming remarks, a beautiful artistic program was presented with the participation of students from all grades of the school, which was greatly appreciated by Bishop Navasardyan.

At the end of the program, the Bishop delivered his heartfelt words and expressed his satisfaction. He greatly appreciated the great work of the College's administration, teaching staff and officials in preserving the Armenian identity. He emphasised that spiritual education is an integral part of Armenian education, for which the Diocese and the Armenian Apostolic Church have spared no effort and will continue to actively support the work of developing the Christian education in the college.

After the closing of the concert, a reception was held in the school's Tchaprazian Library, where His Grace became acquainted with the teachers and the library's activities.



Monday 8 September – In the Diocesan Centre, His Grace received the members of the Hamazkaine Literary and Cultural Committee headed by the Chairperson Mrs Lilik Kotoyan. He was briefed about the activities of the Committee and expressed his unwavering support for the Committee's upcoming projects.



Tuesday 9 September – In the afternoon, Bishop Navasardyan accompanied by Father Avetis Hambardzumyan and Diocesan Councillor Mr Ivan Ohannessian visited Ryde City Mayor Mr Trenton Brown. The meeting was also attended by former Ryde Mayor Mr Sarkis Yedelian. During the meeting, His Grace and Mayor Brown discussed the cordial relations and developing cooperation between the City of Ryde and the Diocese.

Tuesday 9 September – Holy Resurrection Church's ACYA Committee together with the Parish Pastor Father Avetis Hambardzumyan and Father Ashot Abrahamyan visited His Grace at the Diocesan Centre

Thursday 11 September – Bishop Navasardyan received members of the Armenian National Committee of Australia led by the Executive Director Mr Michael Kolokossian at the Diocesan Centre.

His Grace was closely informed about the Committee's work, appreciated it, and expressed his support for the purposeful activities of the Armenian National Committee of Australia.

